

Ֆիլիքս - «Եւրամիութեան կողմէ ճնշումներ չկան Հայաստանի վրայ»

«Եւրամիութեան կողմէ ճնշումներ չկան, Հայաստանը ազատ է կատարել ինքնակամ որոշում», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին վստահեցուցած է Եւրամիութեան հարեւանութեան եւ ընդարձակման հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիլիքս, պատասխանելով այն հարցին, թէ Հայաստանը ինչու է պետք է նախապատուութիւն տայ Եւրոպական Միութեան հետ Ընկերակցութեան Համաձայնագրին եւ ոչ թէ Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային Միութեան անդամակցութեան:



Եւրամիութեան յանձնակատար Շտեֆան Ֆիլիքս

«Ես վերջերս Հայաստան էի եւ Հանդիպեցայ մէկուէն, որ կ'սէր, թէ մենք կը ճնշենք մեր գործընկերներուն վրայ՝ ընտրութիւն կատարելու Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Արեւելեան Գործընկերութեան նախարարական հանդիպման ժամանակ ես յայտնեցի, որ Արեւելեան Գործընկերութեան ծրագիրը իր Ընկերակցութեան Համաձայնագրով նպատակ ունի ամբարայնել մեր գործընկերներու կարելիութիւնները եւ դիրքերը տարածաշրջանէն ներս, ինչպէս նաեւ խրախուսելու դրացի երկրներու հետ իրենց աւանդական յարաբերութիւնները», - յայտնած է Ֆիլիքս:

Վրաստան եւ Մոլդովիա արդէն աւարտած են ազատ առեւտուրի գոտիի բանակցութիւնները Եւրոպայի Միութեան հետ. Հայաստան նոյնպէս առիթ ունի աւարտելու բանակցային այս փուլը

Յուլիսին: Եւրոպայի պատրաստ է բանալու իր 500 միլիոնանոց շուկայի դուռերը Արեւելեան Հարեւանութեան Ծրագրի դժուար յանձնարարութեան արձանագրած երկիրներուն առջեւ, եթէ այդ երկիրները յստակ պատրաստակամութիւն ցուցաբերեն շարժելու եւրոպական տնտեսութեան ուղղութեամբ:

Արեւելեան Գործընկերութեան Ծրագրի մեկնարկէն 4 տարի անցած է, եւ այս տարուայ վերջաւորութեան վիճակի մէջ նախատեսուած է, որ Արեւելեան Հարեւանութեան 6 երկիրներէն Ուքրանիան պիտի ստորագրէ զայն, իսկ Մոլդովիան, Վրաստանը եւ Հայաստանը նախատորազրեն Ընկերակցութեան եւ խոր ու Համապարփակ Ազատ Առեւտուրի Գոտիի Համաձայնագրերը:

Ըստ Ալիեւ Ատրպէյճան մի քանի միլիար ծախսած է զէնք ձեռք ձգելու համար

«Ղարաբաղեան ինդիւրի լուծման ընթացքին՝ քաղաքական եւ դիւանագիտական ջանքերուն գուրահեռ մեր երկրի ռազմական հզօրութիւնը պիտի ըլլայ առանցքային գործօն», - Պաքուի մէջ զիմեւում կառավարութեան անդամներուն, յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ:

«Յառաջիկային Ատրպէյճան պիտի շարունակէ հզօրացնել իր ռազմական գիւնանոցը: Մենք հետագային եւս պիտի գնենք ամենաժամանակակից ռազմական տեխնիկան: Այդ հարցով, ինչպէս գիտէք, մենք որեւէ խնդիր չունինք: Ատրպէյճան գէնք ու գինամթերք ձեռք կը բերէ տարբեր պետութիւններէ, ինչպէս նաեւ կը կազմակերպէ անոնց արտադրութիւնը սեփական տարածքին վրայ: Կ'աճի այն պետութիւններու թիւը, որոնք կը փափաքին ռազմական ասպարէզին ներս համագործակցիլ Ատրպէյճանի հետ: Մամուլէն ներս պարբերաբար տեղեկութիւններ կը յայտնուին այն մասին, թէ Ատրպէյճան մէկ պետութենէն 1 միլիարի գէնք գնած է, միւսէն՝ 1 միլիար 600 միլիոնի: Ես կրնամ

միայն նշել, որ այդ թիւերը իրականութիւնը չեն արտացոլեր: Իրականութեան մէջ մեր ռազմական համագործակցութիւնը կը հաշուուի է մի քանի անգամ աւելի մեծ թիւերով, քան այն, ինչ կը ներկայացուի», - յայտարարած է Իլհամ Ալիեւ:

«Մենք այդ թիւերը չենք հրապարակեր, պարզապէս կը մեկնաբանենք միջազգային մամուլէն ներս ժամանակ առ ժամանակ յայտնուող տեղեկութիւնները: Ամէն պարագայի, մենք կրնանք հրապարակել այդ թիւերը, քանի որ Ատրպէյճանի պիւտճէն լիովին թափանցիկ է», - Ալիեւի խօսքերը կը մէջբերէ «Թուրան» գործակալութիւնը:

Ուշագրաւ է, որ Իլհամ Ալիեւի այս յայտարարութիւններու ֆոնին վրայ, մամուլէն ներս, Պաքուի կողմէ նոր գէնքերու տեսակներու մասին տեղեկութիւնները սկսած են գրեթէ ամենօրեայ բնոյթ կրել: Ուքրանիոյ կողմէ հրապարակուած զեկոյց մը համաձայն, այդ երկիրը 2012-ի ընթացքին Պաքուին վաճառած է երեք հակաթանկային հիւրուային համակարգ:

Վարդան Օսկանեանի դէմ քրեական հետապնդումը դադարեցուած է

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ), դադարեցուցած է նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի դէմ տարի մը առաջ սկսած դատական հետապնդումը:

Յուլիս 24-ին, ԱԱԾ-ի կողմէ տարածուած հաղորդագրութեան համաձայն, 5 օր առաջ Օսկանեանի դէմ է քննչական մարմին եւ ապա ցուցմունք տուած՝ խոստովանելով, որ ամերիկացի բարերար ձոն Հանթսմընի կողմէ ՍԻՎԻԼԻԹԱՍ հիմնադրամին բացառապէս բարեգործական նպատակներով օգտագործելու համար նուիրուած գումարներէն մօտ 251 հազար տոլարը օգտագործած է անձնական նպատակներով, զայն նկատելով, որպէս գործարքի իր մասնաբաժինը:

Օսկանեան, ինչպէս կը յայտնէ ԱԱԾ-ի հաղորդագրութիւնը, հատուցած է քրէական գործի յարուցումէն յետոյ յառաջացած հարկային իր պարտաւորութիւնները՝ աւելի քան 20 միլիոն դրամը, ինչպէս նաեւ ՍԻՎԻԼԻԹԱՍ հիմնադրամ մուտքագրած է ձոն Հանթսմընի նուիրաբերած գումարները եւ անոնց տոկոսները՝ աւելի քան 1 միլիոն տոլար:

«Իմ ամենամեծ թերացումն այն է, որ ՍԻՎԻԼԻԹԱՍ-ի համար նախատեսուած եւ ինձ պահ տրուած գումարներէն ու այդ ժամանակ իմ



Նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան

ուրեցած անձնական գումարները համարել եմ մի ամբողջութիւն: Իրօք եղել են պահեր, որ ՍԻՎԻԼԻԹԱՍ-ի գումարն անգիտակցաբար օգտագործել եմ իմ անձնականի համար: Եղել է նաեւ պահ, որ իմ անձնական գումարներից փոխանցուել է ՍԻՎԻԼԻԹԱՍ-ին», - ըստ ԱԱԾ-ի, իր ցուցմունքներուն մէջ ըսած է Օսկանեան:

Վարդան Օսկանեան սակայն, հերքած է, թէ որեւէ խոստովանութիւն կատարած է ԱԱԾ-ին, իսկ ներկայացուած մեղադրանքը հանուած է յանցակազմի բացակայութեան պատճառով: «Չեն կարողացել ապացուցել եւ ստիպուած են եղել այլ ճանապարհներով գործ

Հալէպի մօտակայքը մէկ հայ զոհուած է, իսկ 17 ուրիշներ՝ վիրաւորուած

Հալէպէն Պէյրութ ճանապարհին, սուրիացի ընդդիմադիրներու կողմէ յարձակման հետեւանքով զոհուած է մէկ հայ եւ վիրաւորուած են 17 հայ ճամբորդներ, որոնք տեղափոխուած են տարբեր հիւանդանոցներ: Ըստ Դամասկոսի ՀՀ դեսպանութեան տուեալներուն, անոնցմէ երկուքի վիճակը ծանր է: Սուրիոյ ընդդիմադիր խմբաւորումներէն մէկը, մի քանի օր առաջ արգիլած էր երթեկեկը Հալէպէն Պէյրութ տանող ճանապարհին վրայ, հակառակ պարագային սպառնալով ռմբակոծել զայն:

Հայոց Առաջնորդարանի Բերիոյ թեմի բանբեր Ժիրայր Ռէխսեան «Ազատութիւն» ռատիոկայանին պատմած է, որ ընդդիմադիրներու այդ զգուշացումէն մէկ օր յետոյ, գինեալ յարձակում մը տեղի ունեցած է եւ Պէյրութ ուղեւորուող պասի մը 5 ճամբորդները զոհուած են, 17-ը՝ վիրաւորուած: Չոհուածներուն մէջ էր ազգութեամբ հայ, երկու երեխաներու մայր, 40-ամեայ Թամար Սիրունեանը: Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, դէպքը տեղի ունեցած է Հալէպէն 30 քիլոմետր

հեռավորութեան վրայ: Գնդակոծուած է Պէյրութ մեկնող երկու պաս: Ժիրայր Ռէխսեանի համաձայն, գինեւորական կոչուող այդ ճանապարհը կը գտնուի Սիրիական կառավարութեան գործերու հսկողութեան տակ: Ընդդիմադիրներու կողմէ Հալէպի շրջափակումէն յետոյ այն բացուած էր՝ կապ հաստատելով արտաքին աշխարհին հետ: Իսկ Պէյրութ տանող հիմնական ճանապարհը փակ է:

Ռէխսեան կը յայտնէ, որ վիրաւորներու կեանքին այժմ վստահ չսպառնար: «Մէկ մարդ արդէն տուն վերադարձած է: Անոնք, որոնք տակաւին բժշկական խնամքի կարիք ունին, դեռ հիւանդանոցներու մէջ են», - ըսած է ան:

«Պէյրութ տանող ճանապարհը չօգտագործելու զգուշացումները եղած են, բայց մարդիկ կը շարունակեն օգտագործել զայն», - մտահոգութեամբ ըսած է Բերիոյ թեմի բանբերը: «Ճանապարհը փակ չէր, պարզապէս մարդոց զգուշացուցած էին չգործածել զայն: Եղած են նաեւ պասեր, որոնք ապահով Պէյրութ հասած են», - ըսած է Ժիրայր Ռէխսեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՉ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ Է ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ՓՈԽԵԼ ՊՈՒՏԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Ռուսաստանցի քաղաքագետներն ու վերլուծաբանները հայ-ռուսական շարաքերութիւնների ոլորտ են հանում նոր փաստարկներ: Օրինակ, Ստանիսլավ Տարասովն ուղիղ տեքստով, սակայն առանց որեւէ փաստարկի յայտարարել է, թէ Հայաստանի ու Եւրոպայի մերձեցումը կապուած է այն բանի հետ, որ Երեւանը ցանկանում է յանձնել Ղարաբաղը:

Սակայն նման թեմաները Հայաստանում արդէն բողոք չեն առաջացնում, եւ ոչ ոք դուրս չի եկել հանրահաւաքի՝ պահանջելով հրաժարուել եւրոպական ինտեգրացիայից յանուն Ղարաբաղի (ի դէպ, ինամքով լուծութեան է մատնում այն հանգամանքը, որ Ռուսաստանի առաջարկած Մաքսային միութեան նախագծում Ղարաբաղը չկայ): Թեման քննարկումներ է առաջացրել միայն քաղաքագիտական միջավայրում, այն մասին, թէ արդեօք Ռուսաստանը պատրաստուած է յանձնել Ղարաբաղը եւ մեղքը բարդել Հայաստանի վրայ: Այդ ժամանակ ասպարէզ նետուեց նոր «փաստարկ»՝ Հայաստանի իշխանութիւնը չի կատարում սեփական ժողովրդի կամքը: Հմայեակ Յովհաննիսեանի հրակէրով Կուրդինեանից յետոյ

կէ, կարող է թեթեւութեամբ խօսել Ղարաբաղը յանձնելու մասին, սակայն Հայաստանում ապրող մարդիկ չեն կարող նոյն թեթեւութեամբ ընդունել նրա խօսքերը: Կարելի է իհարկէ գտնել հեշտ միջոց եւ յայտարարել, որ նման իշխանութիւնից կարելի է ինչ ասես սպասել: Սակայն եթէ իշխանութիւնը վստահ լինէր, որ Հայաստանում բոլորը հեշտութեամբ կը համակերպուէին այդ մտքին եւ միայն ձեւի համար կը մեղադրէին իրեն, վաղուց արդէն յանձնած կը լինէր Ղարաբաղը:

Սակայն իշխանութիւնը գիտէ, որ Թալեաթի ցուցակը, ինչպէս ասում է Շանթ Յարութիւնեանը, բաց է, եւ Հայաստանում շատ մարդ կը գտնուի, ովքեր դա թոյլ չեն տայ: Թէեւ հանրութեան ինչ որ մասը նախկինի պէս մեղադրելու է իշխանութեանը, այն մասը, որը չընդունելով իշխանութեան լեզվափոխութիւնը, նրան տուել է որոշում ընդունելու լիակատար իրաւունք, եւ նախապէս համակերպուել դրան:

Ռուսաստանցի քաղաքագետներն, անկասկած, գոնաժ են անում, փորձելով պարզել, թէ որ թեման է առաւել ցաւոտը հայ հանրութեան համար, եւ ինչը կը ստիպի Հայաստանին նահանջել իր ճանապարհից: Գագի թանկացումը շօշափեց

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՈՒՆՏԻ ՄԻՋԵՒ

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Քաղաքային տրանսպորտի թանկացման այս ամբողջ պատմութեան մէջ ամենահաւուրն այն ցիւրիւսն է, որով իշխանութիւնները ծաղրում են բնակչութեանը՝ հնարաւոր բոլոր առիթներով հեղնելով, թէ միեւնոյն է՝ Հայաստանում սոցիալական բուռն բացառուած է, մարդիկ կաղմկեն-կաղմկեն ու գլուխները կախ կը համակերպուեն: Եւ այնուամենայնիւ ակնյայտ է, որ այս դէպքում «համարադրող կողմերի»՝ իշխանութիւնների եւ ժողովրդի համար հարցն ունի ե՛ւ քաղաքական, ե՛ւ ֆինանսական բաղադրիչներ, որոնց արժէ անդրադառնալ աւելի հանգամանորէն:

1. Իշխանութիւնների համար տրանսպորտի թանկացման քաղաքական բաղադրիչը հետեւեալն է. գծատէրերն, ինչպէս յայտնի է, հիմնականում օլիգարխներ են կամ բարձրաստիճան պաշտօնեաներ, բայց համակարգում կան նաեւ այլ օղակներ՝ «գիծ նայողներ», «նալուզ հաւաքողներ», «մոլոր աշխատացնողներ» եւ այլն: Երեւի տեսած կը լինէք. որպէս կանոն՝ սրանք այն հաստալիք ջահեղներն են, որոնց հիմնական զբաղմունքը երթուղիների «կանցեցներում» բլոտ խաղալն ու խեղճուկրակ վարորդներին «աշխատցնելն» է: Ընդ որում՝ հենց այդ նոյն ջահեղներն են տեղերում կազմակերպում ընտրակեղծիքները, մարդկանց տանում տեղամասեր եւ այլն, ու հիմա այդ «կոտորակները» փոխհատուցում են պահանջում: Սրանց միջոցով «ընտրուած» իշխանութիւններն էլ, բնականաբար, չեն կարող մերժել:

Ինչ վերաբերում է ֆինանսական բաղադրիչին, ապա միայն մի թիւ ներկայացնենք. տրանսպորտի թանկացման արդիւնքում գծատէրերի (այսինքն՝ նոյն պաշտօնեաների եւ օլիգարխների) եկամուտներն աւելանալու են ամսական առնուազն մէկ միլիարդ դրամով: Ամսական 2,5 միլիոն դոլարը, համաձայն էք, փոքր թիւ չէ, մանաւանդ որ բաժանուելու է ընդամէնը 35-40 հոգու միջեւ: Մի խօսքով՝ թալանի ընդհանուր թիւը միայն այս «օպերացիայի» արդիւնքում աւելանալու է տարեկան 30 միլիոն դոլարով: Մօտ 30 միլիոնով էլ աւելանալու է զազալցակալանների տէրերի եկամուտը, որովհետեւ նրանց համար զազալ թանկացել է 14 տոկոսով, իսկ նրանք թանկացրել են 25 տոկոսով: Արդիւնքը՝ տարեկան 60 միլիոն դոլար «յաւելեալ շահոյթ»:

2. Ժողովրդի համար նոյնպէս այս հարցն ունի ե՛ւ սոցիալական, ե՛ւ քաղաքական բաղադրիչ: Սոցիալական տեսանկիւնից տրանսպորտի 50 տոկոս թանկացումը նոյնն է, ինչ հացի թանկացումը 100 տոկոսով (ուղիղ կրկնակի), որովհետեւ միջին վիճակագրական (4 հոգանոց) ընտանիքը հացի վրայ ծախսում է օրական մոտ 350 դրամ, իսկ տրանսպորտի վրայ ծախսելու է առնուազն 600 դրամ: Ընդ որում՝ քաղաքային տրանսպորտն իր կարեւորութեամբ չի գիշում հացին, որովհետեւ որքան էլ խօսենք բոյկոտի մասին, միեւնոյն է՝ մարդիկ ստիպուած են լինելու օգտուել տրանսպորտից: Աւելին՝ տասնեակ հազարաւոր ընտանիքներ կարողանում են «նիս-

յայով» հաց վերցնել ու ամսուայ վերջում վճարել, բայց տրանսպորտից «նիսյայով» օգտուել չի ստացուի: Այսինքն՝ սոցիալական տեսանկիւնից սա շատ աւելի լուրջ հարուած է:

Ինչ վերաբերում է քաղաքական բաղադրիչին, ապա կարեւորը տուեալ դէպքում այն է, որ բոլորը հասկացան՝ տրանսպորտը կոնկրետ Երեւանի քաղաքապետարանն է թանկացրել, ընդ որում թանկացրել է քաղաքական իշխանութիւնների համաձայնութեամբ, առանց որեւէ հիմնաւորման, եւ այն գիտակցումով, որ «մէկ ա՛ սրանցից բուռն անող դուրս չի գալ, ինչ էլ անենք՝ հանդուրժելու են»: Այսինքն՝ հասարակական գիտակցութեան մէջ արմատաւորուեց այն գիտակցումը, որ այս ալան-թալանի դէմն առնել հնարաւոր կը լինի միայն իշխանափոխութեան միջոցով: Եւ ինչդիրն ընդամէնը այն է՝ իշխանափոխութիւնը կը լինի յեղափոխութեա՞ն, թէ սոցիալական բուռն սոցիալական ինքնակազմակերպութիւնները, որպէս կանոն, համեմատաբար աւելի կառավարելի են լինում, եւ ցնցումներից խուսափելու շանսեր մնում են, իսկ սոցիալական բուռն սրբումտանում է բոլորին՝ իր յետեւից թողնելով միայն ջարդուած գլուխներ, այլուած աւտոմեքենաներ ու պետական հիմնարկների քարուքանդ շէնքեր: Թէ որ ճանապարհը կ'ընտրեն իշխանութիւնները՝ այս պահին դժուար է ասել, բայց Սերժ Սարգսեանի իշխանութիւնից ողջամիտ որոշում ակնկալելը, մեղմ սասած, միամտութիւն է: Այնպէս որ՝ այս խմորը դեռ շատ ջուր կը քաշի: Յուսանք՝ հետեւանքներն անդառնալի չեն լինի:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

Հայաստանի իշխանութիւնը վաղուց էր պէտք փոխել, բայց ոչ Մոսկուայի կամ այլ մայրաքաղաքի ցուցումով: Հայաստանում իշխանութիւնը պէտք է փոխի Հայաստանի հանրութիւնը: Եւ նոյն այդ հանրութիւնը չպէտք է թոյլ տայ, որպէսզի Ռուսաստանը եւ միւսները կիրառեն շանտաժի լեզուն, շահարկելով հայկական կեանական

Հայաստան ժամանած Մոսկուայի արտաքին շարաքերութիւնների ինստիտուտի ռեկտոր Անատոլի Տորկոնովը յայտարարել է, որ Հայաստանի բնակչութեան 85 տոկոսը պրոռուսական կողմնորոշման կողմնակից են, իսկ Սերժ Սարգսեանի յայտարարած Եւրոպական կուրսը հակասում է բնակչութեան մեծ մասի դիրքորոշմանը:

Մի կողմ թողնենք թուերի եւ այլ բաների հաւաստի լինելը, եւ ուշադրութիւն դարձնենք այն հանգամանքին, որ մոսկուայի ռեկտորը փաստացի Հայաստանի բնակչութեանը կոչ է անում փոխել իշխանութիւնը:

Եւրասիականութեան յայտնի ապոլոգետ Ալեքսանդր Դուզինը խոստովանում է, որ ցանկութեան դէպքում Մոսկուայի կարող է միջոցներ գտնել փոխելու իշխանութիւնը Հայաստանում եւ այլ երկրներում: Միջոցներն իսկապէս շատ են, եւ Ռուսաստանի կողմից դրանց կիրառման հնարաւորութիւնները գնալով մեծանում են:

Հայաստանի իշխանութիւնը վաղուց էր պէտք փոխել, բայց ոչ Մոսկուայի կամ այլ մայրաքաղաքի ցուցումով: Հայաստանում իշխանութիւնը պէտք է փոխի Հայաստանի հանրութիւնը: Եւ նոյն այդ հանրութիւնը չպէտք է թոյլ տայ, որպէսզի Ռուսաստանը եւ միւսները կիրառեն շանտաժի լեզուն, շահարկելով հայկական կեանական շահերը: Ստանիսլավ Տարասովն, իհար-

լայն շերտերի, սակայն բուռն չառաջացրեց, փոխարէնը խորացան հակառուսական տրամադրութիւնները: Նոյնիսկ Ղարաբաղում պատերազմի վերսկսման սպառնալիքը (Ատրպէյճանին ցուցադրաբար գէնք վաճառելու ֆոնին) աւելի շատ Ռուսաստանի, քան Հայաստանի իշխանութեանը վնասեց:

Ներկայում փաստարկ է պէտք հենց Հայաստանի իշխանութեան դէմ, եւ նման փաստարկ է ընտրուել Ղարաբաղը յանձնելու թեման: Ճիշդ է, Ռուսաստանցի ոչ մի վերլուծաբան չի կարողանում բացատրել, թէ ինչու պէտք է Սերժ Սարգսեանը ամէն գնով պայքարեր նախագահական երկրորդ ժամկէտի համար, եթէ պատրաստուած էր յանձնել Ղարաբաղը եւ պատմութեան մէջ մնալ որպէս յանձնող:

Հայաստանում իշխանութեան ձեւաւորման ինչդիրը հայ ժողովրդի ինքնիշխան իրաւունքն է: Եւ հայ ժողովրդի պայքարը պէտք է ուղղուած լինի այդ իրաւունքն իրեն վերադարձնելուն, որը խլուել է նաեւ Ռուսաստանի գործուն ու անմիջական մասնակցութեամբ: Ի տարբերութիւն Ռուսաստանի, որտեղ Դուզինը որպէս պետութեան, իշխանութեան, կայսրութեան միակ կրող համարում է Պուտինին, Հայաստանում, փառք Աստուծոյ, ոչ ամբողջ իշխանութիւնն է պատկանում Սերժ Սարգսեանին: Նրա հետ, թէ առանց նրա, հայերը չեն կարող ինքնապայանութեան գնալ:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ակտիվիստները վճռական պայքար են խոստանում տրանսպորտի թանկացման դեմ



Երեւանի մէջ քախու մներ թանկացումներու դեմ քողովակներու եւ ոստիկանութեան միջեւ

Երեւանում հասարակական տրանսպորտի թանկացման դեմ բողոքի ակցիաներ անցկացնող ակտիվիստները պահանջում են անյապաղ դադարեցնել «մարդկանցից խաբէութեամբ 150 դրամ վերցնելը» եւ պատասխանատուութեան ենթարկել բոլոր այն անձանց եւ պաշտօնեաներին, ովքեր ներգրավուած են տրանսպորտի գնի բարձրացման փորձերի մէջ:

Ակտիվիստները բողոքի տարբեր ակցիաներ են կազմակերպում կանգառներում կոչ են անում վճարել 100 դրամ երթուղայինների եւ ատորուների համար, եւ 50 դրամ՝ տրոլէյբուսի համար:

Բացի այս ակցիաներից գործում է նաեւ Freecar ակցիան մարդիկ կամաւոր անվճար տեղափոխում են կանգառներում սպասողներին: «Ֆէյսբուք»-ը ողողուած է այս ակցիաներին մասնակցելու

պատրաստակամութիւն յայտնողների գրառումներով: Արդէն նկատելի է սեփական միկրոատոբուս ունեցողների ակտիվութիւնը ուղեւորներին անվճար տեղափոխելու հարցում:

«Սրանով բացայայտուեցին մեր հանրութեան մէջ թաքնուած սոցիոլոգիական եւ փոխօգնութեան ունեւորները: Սա նշանակում է, որ ցանկացած հակասոցիալական եւ հակաիրաւական որոշմանը կը հետեւի մարդկանց համախմբուած արձագանքը», - ասում է ակտիվիստ Լենա Նազարեանը:

Վերջին օրերին, ակտիվօրէն քննարկուած է նաեւ պաշտօնեայ «գծատէրերի» հարցը: Ակտիվիստները շեշտում են, որ ոլորտում որոշում կայացնողները առաջնորդում են իրենց մասնաւոր շահե-

Շաբ.ը էջ 5

ՀՀ փոխնախագահն ասում է՝ «թանկացումները Հայաստանի գլխին սարքում են»

Իշխող Հանրապետականի (ՀՀԿ) փոխնախագահը տրանսպորտի ուղեվարձի բարձրացումը կապում է աշխարհաքաղաքական զարգացումների հետ:

Ռազմիկ Չոհրաբեանն «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում հետեւեալ հարցադրումն արեց, թէ ինչո՞ւ ուղեվարձի թանկացման դեմ ակտիվ բողոքող երիտասարդները չեն հասկանում, որ այն, ինչ այսօր կատարուած է իրականում «սարքում է Հայաստանի գլխին»:

Հարցին, թէ ո՞վ է «սարքում Հայաստանի գլխին», ՀՀԿ-ի փոխնախագահը պատասխանեց. - «Գլխին սարքելը այն է, որ Հայաստանը ուժեղ պետութիւն չէ, գերտէրութիւն չէ, եւ գերտէրութիւնները մի մատի շարժումով կարող են այստեղ ներքին բաներ ստեղծել: Խօսքը միայն Ռուսաստանի մասին չէ, որովհետեւ հստակ գնում է քաղաքակրթութիւնների մրցակցութիւն՝ Հայաստանը գնալ դէպի եւրասիացիութիւն, թէ՛ գնալ Ռուսաստանի Մաքսային միութիւն: Այսպէս ասած՝ վերելքները, գիզանտները կոխը ներքեւում ինչ-որ արձագանք է ստանում: Փառք Աստուծոյ, եթէ մենք պրծնենք միայն տրանսպորտի թանկացումներով, մի կերպ երկա



ՀՀԿ-ի փոխնախագահը Ռազմիկ Չոհրաբեան

կը գնանք: Աստուած չանի, ուրիշ տնտեսական լուրջ խնդիրներ առաջանան»:

Դիտարկմանը, թէ գերտէրութիւնները ի՞նչ կապ ունեն տրանսպորտի թանկացման հետ, եթէ երթուղիների սեփականատէրերն են թանկացնում այն, Չոհրաբեանը արձագանքեց. - «Արդէն ասացի, որ ամէն ինչ դրսից է գալիս: Գազը թանկացաւ... գազ մեզ ո՞վ է տալիս, Ռուսաստանը, պահեստամասերը ո՞վ է տալիս, էլի՛ Ռուսաստանը: Չի բացառուում, որ գծի տէրերը իրենց մտքում ասում են՝ ինչու 100 դրամ ստանամ, թող 120 ստանամ: Չեմ բացառում»:

Անդրիաս Ղուկասեան,- «Երեւանում քաղաքացիական անհնազանդութիւնը արդար է եւ օրինական»

Պետութեան կողմից անօրինական ճանապարհով երկրում գնների արհեստական բարձրացումը բռնութիւն է հանրութեան նկատմամբ, ուստի քաղաքացիական անհնազանդութիւնը Երեւանում քաղաքային տրանսպորտի սակագինը բարձրացնելու դէմ, արդար է եւ օրինական: Նման բովանդակութեամբ յայտարարուէին է տարածել նախագահի նախկին թեկնածու Անդրիաս Ղուկասեանը:



Նախագահի նախկին թեկնածու Անդրիաս Ղուկասեան

Նրա յայտարարութիւնում նաեւ ասում է. «Ես ողջունում եմ մեր քաղաքացիներին, ովքեր իրենց առօրեայ հոգսերով հանդերձ այսօր դրսեւորեցին հրաշալի քաղաքացիական կեցուածք՝ հանրութեան կենսական նշանակութեան շահերը պաշտպանելու հարցում: Դա նաեւ վկայում է, որ մեր երկրում կան նախադրեալներ եւ ներուժ իսկական քաղաքացիական հանրութիւն ձեւաւորելու համար»:

«Դիմում եմ նաեւ ձեզ՝ քաղաքական գործիչներ, ում ձեռքում են գտնուում որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ լծակները: Կիրառէք ձեր իրաւասութիւնները երթուղային տրանսպորտի համակարգում անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու համար: Վերացրէք այս մասնատուած եւ ձեր մէջ բաժին-բաժին արուած Երեւանի երթուղային «գծերը»՝ փո-

խարինելով դրանք երթուղային տրանսպորտի ժամանակակից միասնական համակարգով: Ստեղծէք ուղեւորների համար ուղեվարձի վճարման եղանակների ճկուն բազմազանութիւն: Վարորդներին ապահովէք բարձր աշխատավարձ եւ ազատէք «օրուայ պլանը» կատարելու եւ ուղեւորներից փող հաւաքելու պարտականութիւնից: Վերջ տուէք վարորդների անհարկի շահագործմանը եւ ուղեւորների իրաւունքների ոտնահարմանը՝ ձեր անձնական եկամուտները ստանալու համար: Հակառակ դէպքում, կը կորցնէք այդ ամէնը ոչ հեռու ապագայում, երբ ժողովուրդը հետ կը վերցնի ձեզանից իր ճակատագիրը որոշելու իրաւասութիւնները»:

Հայաստանում կենսամակարդակը նուազել է

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած այս տարուայ առաջին վեց ամիսների պաշտօնական նախնական տուեալների համաձայն, Հայաստանում արձանագրուած գնաճի տեմպն աւելի մեծ է եղել, քան միջին ամսական աշխատավարձի աճը:

Այս մասին գրում է «Հայկական ժամանակ» թերթը եւ յաւելում. «Ըստ այդմ, գնաճը 6 ամիսներին կազմել է 4.1 տոկոս, իսկ աշխատավարձի աճը 2.1 տոկոս՝ անցած տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ: Իսկ դա նշանակում է, որ գներն աւելի արագ են աճել, քան մարդկանց աշխատավարձը: Դա էլ իր հերթին նշանակում է, որ նուազել է մարդկանց կենսամակարդակը՝ մարդիկ աղքատացել են: Պէտք է յատուկ շեշտել, որ պաշտօնապէս արձանագրուած գնաճը չի ներառում գազի եւ էլէկտրոէներգիայի թանկացումները, քանի որ խօսքը այս տարուայ Յունուար-Յունիս ամիսների մասին է: Իսկ գազն ու էլէկտրոէի թանկացել են Յունիսի 7-ից», - գրում է «Հայկական ժամանակը»: ն

Ազատամարտիկները միաւորուել են

Ազատամարտիկները միաւորուել են սոցիալական եւ օրէնսդրական բարեփոխումներ իրականացնելու համար:

Այս մասին հաղորդեց ՄՀՆԶ-ի վետերանների միութեան նախագահ, գնդապետ Գրիշա Սարգսեանը: Նա նշեց, որ ազատամարտիկների պայքարի մեթոդները տարբեր են, սակայն նպատակը մէկն է. «Այն զաւեշտալի պատճառաբանութիւնները, որ կառավարութեան բիւջէում չկայ գումար այս չարչրկուած հարցը լուծելու համար, ազգակապութիւն է: Այսօր խաղաղ պայմաններում, ազատամարտիկը լքում է իր հայրենիքն՝ իր ազատագրած հողը եւ գնում է կամաւոր յանձնուած է այլ պետութիւնների սոցիալական ծառայութիւններին: Սրանից աւելի էլ ի՞նչ է եք ուզում», - նշեց պարոն Սարգսեանը:

Ազատամարտիկ Արայիկ Խուրազբեկեանն ասաց, որ իրենք պահանջում են յստակեցնել օրէնսդրական դաշտը, իսկ ազատամարտիկ Յարութիւն Ստեփանեանը նշեց, որ պետութիւնը յամառօրէն չի կատարում իրենց պահանջները:

ՀՀԿ-ն պաշտպանում է

Հայաստանի դեմոկրատական կուսակցութիւնը պաշտպանում է Նոյեմբերի 29-ը որպէս Հայաստանի Երկրորդ Հանրապետութեան հիմնադրման օր ճանաչելու առաջարկով ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սօս Սարգսեանի եւ տնտեսագէտ-հրապարակախօս Սուրէն Սարգսեանի դիմումն՝ ուղղուած ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին:

Մենք եւս գտնում ենք, որ Հայաստանի Առաջին եւ Երրորդ Հանրապետութիւնների հաստատման օրերն անպայմանօրէն նշելու հետ մեկտեղ, այսուհետ պէտք է նաեւ նոյնպէս պետականօրէն նշուի եօթ տասնամեակում մեր ժողովրդի կեանքում սոցիալ- տնտեսական, հոգեւոր- մշակութային աննախադէպ նուաճումներ գրանցած, անկախ եւ ինքնիշխան ազգային պետականութեան հիմքերի ստեղծման եւ ամրապնդման գործում իր ծանրակշիռ լուծման ներդրած Երկրորդ Հանրապետութեան օրը:

Դրանով կը վերականգնուի պատմական արդարութիւնն ու զարգացման բնական շղթան:

ԼՈՒՐԵՐ

Ուրուգուայում կը կառուցուի Հայոց ցեղասպանութեան թանգարան



Տեսարան մը նախագահական Պալատէ մերս տեղի ունեցած հանդիպումէն

Ուրուգուայի նախագահական նստավայրում տեղի ունեցած հանդիսութեան ընթացքում ընթերցուել է երկրի նախագահ Խոսէ Մուխիկայի նամակը ուղղուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ մայրաքաղաք Մոնտեվիդէոյում յատուկ թանգարանի կառուցման պատասխանատուներին՝ Կրթութեան եւ մշակույթի նախարարութեանն ու հայ համայնքային կառույցներին:

Մուխիկան ուղերձում նշել է, որ Հայոց ցեղասպանութեան թանգարանի ստեղծումը «շնորհալուրելի մի նախաձեռնութիւն է», քանի որ այն կենդանի է պահելու հասարակութեան յիշողութիւնը մի ցեղասպանութեան մասին, որը «ցնցել է ամբողջ մարդկութեանը»:

Կառուցուելիք թանգարանն ու դրա բովանդակութիւնը իրենց ելույթներում ներկայացրել են Ուրուգուայի կրթութեան եւ մշակույթի նախարարը, փոխնախարարը, թանգարանների գլխավոր փորձագետը:

Ուրուգուայի համայնքի անունից երկրի օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանը երախտագիտութեան խօսք ասաց Հայ եկեղեցու առաջնորդ Տէր Յակոբ ար-

քեպիսկոպոս Գլէնջեանը՝ ընդգծելով, որ առաջին անգամ է Հայաստանից դուրս կառուցուելու Հայոց ցեղասպանութեանը նուիրուած պետական թանգարանը:

«Մա արտացոլում է Ուրուգուայի պետութեան մեծութիւնը», - նշել է Սրբազանը՝ յաւելելով, որ համայնքը պատրաստ է իր աջակցութիւնը բերել ծրագրի իրագործմանը:

Հանդիսութեանը ներկայ էր եւ ելույթ ունեցաւ ՀՀ դեսպան Վահագն Մելիքեանը:

«Այսօր հպարտութեան, արդարութեան վերականգնման, յիշողութեան ամրապնդման եւ յաղթանակի օր է մեզ բոլորիս համար: Հերթական հիմնաւոր պատասխան է ժխտողականութեանը, այլատեսացութեանը եւ հայատեսացութեանը: Այսօր արդարութեան վերականգնման ճանապարհին հերթական՝ բաւականին մեծ եւ պատմական քայլն է կատարուում, ինչի համար ես կը ցանկանայի Հայաստանի կառավարութեան անունից մեր երախտիքի խօսքերն ուղղել Ուրուգուայի պետութեան իշխանութիւններին», - ասաց դեսպանը:

Թանգարանի կառուցումը սկսելու համար շուտով ձեւաւորուելու է պետական յանձնաժողով:

Հրաչեայ Յարութիւնեանը հրաժարուել է ցուցմունքներ տալ

Մոսկուայի մերձակայքում 18 մարդու կեանք խլած ճանապարհատրանսպորտային պատահարի գործով մեղադրեալ Հրաչեայ Յարութիւնեանը հրաժարուել է ցուցմունքներ տալ: Այդ մասին հաղորդում է ռուսական «Նովոստի» գործակալութիւնը՝ յղում կատարելով Մոսկուայի ոստիկանութեան լրատուական ծառայութեանը:

Յարութիւնեանը կալանաւորուած է Յուլիսի 13-ից՝ երկամսեայ ժամկէտով:

Հարցաքննութիւնն անցկացուել է «Մատրոսկաեա Տիշինա» մեկուսարանում: Յարութիւնեանն այս պահին գտնուում է կալանավայրի մեկուսարանում, ուր տեղափոխուել է առողջական գնահատման պատճառով:

Մոսկուայում է գտնուում Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեանը, ով, ըստ Պաշտպանի գրասենեակի

տարածած հաղորդագրութեան, պէտք է հանդիպէր կալանաւորուած Յարութիւնեանի, նրա փաստաբանների եւ քրէական գործին առնչուող ռուս պաշտօնեաների հետ:

Պաշտպանի գրասենեակից «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին, որ Կարէն Անդրէասեանը այցի մանրամասները կը ներկայացնի վերադառնալուն պէս:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Հրաչեայ Յարութիւնեանի դուստրը՝ Լիլիթ Յարութիւնեանը, ասաց՝ ամենօրեայ կապի մէջ են հոր փաստաբանների հետ, սակայն նրա հետ անձամբ չեն գրուցել: Ընտանիքի անդամները ցանկացել են մեկնել Մոսկուա՝ Հրաչեայ Յարութիւնեանին հանդիպելու, բայց աւելի ուշ փոշմանել են, Լիլիթ Յարութիւնեանի խօսքով՝ անվտանգութեան նկատառումներով:

«Մի քանդէք Յեղասպանութեան ենթարկուած հայերի տները, ցաւը դեռ մեր սրտերում է».- Մուշի պատգամաւորներ

Մուշում դեռեւս կանգուն մնացած պատմական հայկական տների քանդման դէմ համատեղ յայտարարութեամբ են հանդէս եկել Մուշից ընտրուած պատգամաւորներ Դեմիր Չելիքը եւ Սըրրը Սաքըքը՝ յայտարարելով, թէ Յեղասպանութեան ենթարկուած հայ ժողովրդից մնացած պատմական տները քաղաքային զարգացման նախագծի անուան տակ չեն կարող պատմութիւնից ջնջուել:

Թուրքական Haber-ի փոխանցմամբ՝ քրդական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան Մուշից ընտրուած պատգամաւորներ Դեմիր Չելիքը եւ Սըրրը Սաքըքն համատեղ յայտարարութեան մէջ նշել են, որ պատմութեան ամենացաւալի յիշողութիւններ ունեցող Մուշի Քալէ (բերդ) թաղամասի քանդումը թէ հայ հասարակութեանը, թէ հայ հասարակութեան ցաւերը կիսող մարդկանց մօտ խոր տխրութիւն է առաջացրել:

«Ոչ մի զգայուն քաղաքացի նման նախագծի հաւանութիւն չի կարող տալ: Թէեւ արդէն 100 տարի է անցել, տեղի ունեցած ողբերգութեան պատճառով արիւնհոսում են մեր սրտերը: Յեղասպանութեան ենթարկուած հայ ժողովրդից մնացած պատմական տները քաղաքային զարգացման նախագծի անուան տակ չեն կարող պատմութիւնից ջնջուել:

Յաւալի պատմութիւններով լեցուն վայրերից մէկը հանդիսացող Մուշի Քալէ թաղամասում իրականացուող նախագիծը պէտք է խաղաղութեանը նպաստի: Քալէ թաղամասի պատմական տները ոչ թէ պէտք է քանդել, այլ դրանք պէտք է վերականգնել: Քալէ թա-



Մուշից ընտրուած պատգամաւորներ Դեմիր Չելիք

ղամասում մշակութային փողոց կարելի է ստեղծել՝ վերանորոգելով հայկական եկեղեցիները եւ տները»,-նշուել է քուրդ պատգամաւորների յայտարարութեան մէջ:

Նշենք, որ Մուշի քաղաքապետարանը որոշում է կայացրել Քալէ թաղամասում կանգուն մնացած հայկական պատմական տները քանդել՝ տեղում շէնքեր կառուցելու նպատակով:

Այս ամէնը բողոքի ակիբ է բարձրացրել Ստամբուլի հայ համայնքի եւ Թուրք առաջադէմ գործիչների մօտ:

Հայկական տների քանդման դէմ ստորագրահաւաքին է միացել նաեւ Ռազրփ Չարաքոյուն՝ նշելով. «Այս երկրում 1915-ի հաշիւը չպահանջելու պատճառով այսօր բոլոր բնիկ ազգերի (հայեր, յոյներ, ասորիներ, քրդեր) նկատմամբ շարունակուում է համակարգուած կոտորածը: 1915-ին սկսուած ցեղասպանութիւնն այսօր շարունակուում է որպէս մշակութային եւ տնտեսական ցեղասպանութիւն: Ժողովուրդների եղբայրութեան եւ հաւասարութեան անունից քանդման դէմ մէկ ստորագրութիւն էլ դու դիր

Լեռնային Ղարաբաղի երկու քաղաքացի դատապարտուել են լրտեսութեան մէջ

Լեռնային Ղարաբաղի ընդհանուր իրաւասութիւնների առաջին ատենախորհուրդում Յուլիսի 23-ին երկարատեւ ազատազրկման է դատապարտել լրտեսութեան եւ պետական դաւաճանութեան մէջ մեղաւոր ճանաչուած Ռաֆայէլ Աւագեանին եւ Դաւիթ Բարսեղեանին:

«Ազատութիւն» ռադիոկայանի փոխանցմամբ, պաշտպանութեան բանակի պայմանագրային զինծառայող, 22-ամեայ Ռաֆայէլ Աւագեանը եւ ուսանող Դաւիթ Բարսեղեանը դատապարտուել են համապատասխանաբար 11 եւ 10 տարուայ ազատազրկման:

Ըստ մեղադրանքի, Աւագեանն ու Բարսեղեանը շուրջ մէկ տարի առաջ «Օդնոկլանսիկի» սոցիալական ցանցում ծանօթացել են Ստամբուլում բնակուող ոմն Սամուէլ Ազատեանի հետ, ով ներկայացել էր որպէս բարեգործական կազմակերպութեան անդամ, եւ Աւագեանից որոշակի տեղեկութիւններ էր խնդրել Պաշտպանութեան բանակի, արտակարգ պատահարների ժա-

մանակ զոհուածների ու վիրաւորների մասին, բժշկական սպասարկման եւ այլնի մասին:

Տեղեկութիւնների դիմաց Աւագեանը որպէս նուէր ստացել է ձեռքի ժամացոյց, այլ իրեր եւ շուրջ 1000 ԱՄՆ դոլար: Այդ գումարից 200 դոլարը Աւագեանը փոխանցել է Դաւիթ Բարսեղեանին? Կովսականում սիրիահայերի լուսանկարների համար:

Ամբաստանեալներն իրենց ներկայացուող մեղադրանքը չեն ընդունել, իրենց մեղաւոր չեն ճանաչել՝ փաստարկելով, թէ չեն գիտակցել սեփական գործողութիւնների իրական նշանակութիւնը:

Աւագեանի եւ Բարսեղեանի փաստաբան Արկաղի Իսրայէլեանը արդարացի չի համարում դատավճիռը՝ պնդելով, թէ իր պաշտպանեալները կարծում էին, թէ շփուում են բարեգործի հետ, իսկ մեղադրող կողմն ու դատարանը չեն կարողացել պարզել ամբաստանեալների վիրտուալ գրուցակցի ինքնութիւնը:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՏՕՔԹ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍԸ ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ուրբաթ, 12 Յուլիսին, 2013, երեկոցեան Կլէնտոնի հանրային գրադարանի հանդիսարանին մէջ կայացած սոյն միջոցառումը՝ կազմակերպուած էր Ս.Դ.Հ.Կ.ի հովանաւորութիւնը վայելող Հայ Ամերիկեան Խորհուրդին (ՀԱԽ) կողմէ:

Նիւթի այժմեականութեան համար, հակառակ ամառային տաք եղանակին աւելի քան 200 հանդիսականներ ներկայ եղան Տօքթ. Համբիկ Սարաֆեանի բանախօսութեան, որուն նիւթն էր «Սուրիոյ Պատերազմը, աշխարհաքաղաքական եւ յարանուանական գործօնները ու շրջանի հայութեան հեռանկարը»:

Երեկոցի հանդիսավարը Յակոբ Աճէմեան, ՀԱԽ-ի վարչութեան անունով, սեղմ գիծերու մէջ ներկայացուց Հայ Ամերիկեան Խորհուրդի առաքելութիւնն ու օրուան բանախօսի՝ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ Տօքթ. Համբիկ Սարաֆեանի կենսագրութիւնը:

Տօքթ. Հ. Սարաֆեան հպանցիկ կերպով անդրադարձաւ «Արաբական Գարուն»ի հետեւանքով տարածաշրջանէն ներս տեղի ունեցած փոփոխութիւններու մասին: Այս շեշտը դրաւ յառաջացած երեք ուղղութիւններու վրայ՝ միջազգային-տարածաշրջանային եւ տեղական:

«Ամենամտահոգիչն այն է, որ երբեմնի քաղաքական դաշնակիցներ՝ դարձած են երկիրներ եւ ոյժեր, որոնք գաղափարապէս եւ կրօնապէս իրարամերժ ճամբարներու մէջ կը գտնուին, այսօր յանկարծ յայտնուած են նոյն ճամբարին մէջ եւ կը պայքարին այս կամ այն կողմին համար» ըսաւ գեկուցաբերը:

Խօսելով միջազգային ազդեցութեան մասին Տօքթ. Սարաֆեան շեշտեց, որ գործ ունինք Արեւմուտքի հետ (Ամերիկա, Անգլիա, Ֆրանսիա) եւ Արեւելքի հետ (Ռուսիա, Չինաստան) եւ յարեց «Այս երկուքի պայքարը հետաքրքրական է, որովհետեւ Սովետական Միութեան փլուզումէն ետք, ամբողջ աշխարհի աշխարհաքաղաքական պատկերը փոխուեցաւ եւ այդ երկու բեւեռները վերացան: Սակայն, որոշ երեւոյթներ (մանաւանդ Միջին Արեւելեան առումով) մնացին, որուն մէկ դրսեւորումն է այսօրուան Սուրիոյ իրավիճակը»:

Այնուհետեւ Հ. Սարաֆեան անդրադարձաւ Լիպիոյ վարչակարգի անկումին, պատճառ դառնալով որ Ռուսիա միլիտարիզացրած սուրիացիները վնասուի: Ասկէ դասեր քաղելով Ռուսիա գորացուց Միջերկրականի իր նաւատորմը Լաթիֆի մէջ: Եթէ այս խարխիսն ալ կորսնցնելու ըլլայ՝ այլեւս Միջին



բանախօս Տօքթ. Համբիկ Սարաֆեան

Արեւելքի մէջ ոչ մէկ դաշնակից պիտի ունենայ: Այս քայլը գաղափարախօսական կեցուածք չէ, այլ՝ գոտի շահագիտական:

Գալով Անգլիոյ եւ Ֆրանսայի, անոնք դիրքաւորուած են ԱՄՆ-ի կողքին, մտահոգութիւն ունենալով քարիւղի անխաբան հոսքը դէպի Եւրոպա կամ աշխարհի այլ շրջանները: Թուրքիան այսօր ջատագովն է Արեւմտեան քաղաքականութեան, իսկ Իրանը՝ Ռուսիոյ եւ Չինաստանի:

Խօսելով Թուրքիոյ եւ Իրանի մասին՝ Տօքթ. Սարաֆեան ընդգծեց, որ երկուքին միջեւ տիրապետութիւն հաստատելու մրցապայքար մը կայ: Թուրքիան տնտեսական-քաղաքական ոյժով, իսկ Իրանը ասոր վրայ աւելցուցած է նաեւ կրօնական ենթատեքստը:

Սուրիոյ պարագային կրօնա-յարանուանական պայքար դրսեւորուեցաւ եւ նկարագրուեցաւ որպէս ժողովրդի պայքարը՝ մենատիրութեան դէմ: Վստահօրէն կարելի է ըսել, որ Սուրիոյ յեղափոխութիւնը կամ ընդվզումները, եթէ այսօր կամ անցեալ տարի սկսած ըլլային, կարելի է ենթադրել որ Արեւմուտքի վերաբերմունքը նոյնը պիտի չըլլար: Որովհետեւ Արեւմուտքի ակնկալութիւնները Սուրիոյ մասին նոյնն էր, այսինքն՝ իրենք պիտի կարողանային տնտեսական եւ քաղաքական լծակները պահել: Սակայն պատերազմը երկարելով, վերածուեցաւ ներքին պատերազմի աւելի միջազգային հետեւանքներով յղի: Այս բոլորին մէջ տեղ գրաւեցին նաեւ յարանուանական հակասութիւնները, որոնք այսօր կը կազմեն Միջին Արեւելքի ամենամտահոգիչ երեւոյթներէն մէկը: Գալով յարանուանական գործօններուն, որոնք հիմնական երկու ուղղութիւն ունին սիւննի-շիա եւ սիւննի-սիւն-

նի: Սիւննի-շիա պայքարը կ'ընթանայ արաբական երկիրներու Մէնուտական Արաբիոյ գլխաւորութեամբ ընդդէմ Իրանի, որուն դաշնակիցն է Սուրիա եւ հովանաւորեալը Հըզբոլլան:

Սիւննի-սիւննի պայքարը Մէնուտական Արաբիոյ եւ Գաթարի միջեւ է: Առաջինը՝ Սիւննի Ուահապի սալաֆիական ուղղութեան կը հետեւի իսկ Գաթարը իսլամ եղբայրներու գլխաւոր հովանաւորն է թէ Եգիպտոսի եւ թէ Սուրիոյ մէջ:

Մէնուտական Արաբիա խիստ հակառակ է իսլամ եղբայրներուն, որովհետեւ անմիջական վտանգ կը տեսնէ այդ շարժման մէջ թագաւորական ընտանիքին համար, քանի որ իսլամ եղբայրները իսլամական հանրապետութիւն կուզեն ստեղծել Իրանի նման, բայց Սիւննի դաւանանքով:

Իրանը Սուրիոյ կ'աջակցի, որպէսզի լծակները չի կորսնցնէ եւ «Հըզբոլլան իր խաղաքարդին մաս կը կազմէ»:

Ի դէպ, իսլամ եղբայրներու՝ յետ արաբական գարնան այսքան



Հանդիսավար Յակոբ Աճէմեան

արագ իշխանութեան գալը Թուրքիա եւ Եգիպտոսի մէջ անակնկալ մըն էր բոլորին համար եւ իսլամ եղբայրներու երեւոյթը Միջին Արեւելքի մէջ նոր իրականութիւն մըն է, որ տարիներ շարունակ փակի տակ մնալէ յետոյ այսօր լիարժէք կերպով իր դրսեւորումը կ'ունենայ այդ շրջանէն ներս:

Կրօնական կազմակերպութեան մասին խօսելով Տօքթ. Հ. Սարաֆեան նշեց. «Իսլամ եղբայրները եւ սալաֆիները նոյն տեսլա-

կանը ունին՝ ստեղծել համաշխարհային իսլամական խալիֆայութիւն, երկուքի միակ տարբերութիւնն այն է, որ սալաֆիները իշխանութեան ձգտում չունին, իսկ իսլամ եղբայրները ճիշտ հակառակը:

Իսլամ եղբայրներու եւ Մէնուտական Արաբիոյ պայքարը այսօր կը դրսեւորուի Սուրիոյ մէջ, ուր մինչեւ վերջերս Գաթար հիմնական դերակատարն էր ընդդիմադրութեան ֆինանսաւորման եւ գինեւր գործին մէջ, որուն հետեւանքով, իսլամ եղբայրները գերիշխող խմբաւորումն էին ընդդիմադիր ղեկավարութեան մէջ եւ թոյլ չէին տար որ աշխարհիկ ու ոչ իսլամ տարրեր ընդգրկուին անոր մէջ: Հիմա իրավիճակը փոխուած է, Արեւմուտքի եւ Մէնուտական Արաբիոյ ջանքերով, Գաթար երկրորդական դերակատար դարձաւ ու փոխարինուեցաւ Մէնուտական Արաբիայով:

Յարանուանական պայքարը պատճառ դարձաւ որ ծայրահեղ իսլամ մարտիկներ, աշխարհի չորս ծագերէն շտապէն Սուրիա: Այսօր անոնք ամենակազմակերպուած զինեալ ոյժն են Սուրիոյ մէջ եւ կապ ունին կամ կը համակրին Ալ Քալիտային: Անոնք, իրենց տիրապետութեան տակ եղող շրջաններուն մէջ շարիաթի օրէնք մտցուցած են արդէն:

Տօքթ. Հ. Սարաֆեանի համաձայն Սուրիահայութիւնը բարեխառաբար մեծ վնասներ չէ կրած, բայց եթէ իսլամ ծայրահեղականները յաջողութեան հասնին, ապա շատ դժուար կրնայ ըլլալ հայութեան պարագան, քանի որ անոնք նոյնիսկ իրենց կրօնակիցները չեն ինայէր, ուր մնաց քրիստոնեաները: Սուրիահայութեան ամենագլխաւոր գործը անկատ մնալն է եւ որքան հնարաւոր է չեզոք դիրք բռնելն է: Այլապէս հետեւանքները աղիտալի կրնան ըլլալ:

Իր ելույթի վերջաւորութեան Տօքթ. Սարաֆեան հետեւեալ եզրայանգումն ունեցաւ «Միջին Արեւելքի ապագան մեծապէս կախեալ է երիտասարդ սերունդի եւ յառաջդիմական ոյժերու եւ թէ քաղաքական իսլամի պայքարի արդիւնքէն: Այդ պայքարը այսօր կը դրսեւորուի Եգիպտոսի մէջ եւ կրնայ տանտակ տարիներ տեւել: Առաջինի յաղթանակի պարագային, ապագան յուսաբեր է»:

Վարդան Օսկանեան

Շաբաթակուած էջ 1-էն

ծը կարճել», - ըսուած է Օսկանեանի տարածած հաղորդագրութեան մէջ:

Այս Գործի ամբողջ ընթացքին նախկին արտաքին գործոց նախարարը, անոր կուսակիցները ու շրջապատը կը պնդէին, թէ Օսկանեանի

դէմ սկսած քրէական հետապնդումը քաղաքական պատուէր է, եւ պատճառ անոր քաղաքական գործունէութիւնն է, հնչեցուցած ընդդիմադիր ու կոշտ գնահատականները եւ Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան կողմէ նախագահի թեկնածու դառնալու պատրաստակամութեան մասին յայտարարութիւնները:

Ակտիվիստները վճռական են

Շաբաթակուած էջ 3-էն

րով: Կայքերում տեղեկութիւն էր հրապարակուել, որ 18 համարի աւտոբուսային երթուղու սեփականատէրն է Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչութեան պետ Հենրիկ Նաւասարդեանը: Վերջինս ասել է, որ դա իր եղբոր տղայի գիծն է: Ակտիվիստներն ուշադրութիւն են հրաւիրում եր-

թուղիների եւ պաշտօնեաների աւնչութիւնների հարցին. - «Օրինակ, «Հետքը» հրապարակել է երկու յօդուած, ըստ որի? ուրտում ներգրաւուած պաշտօնեաներից Հենրիկ Նաւասարդեանը եւ Գագիկ Բեգլարեանը «գծատէրեր» են, նաեւ՝ քաղաքապետ Տարօն Մարգարեանը, Կաթողիկոսը, Գալուստ Սահակեանը, մի շարք մականունաւոր եւ ոչ մականունաւոր պատգամաւորներ...»:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՇՔԵՂ ՓԱՌԱՏՈՆԸ



Փաստորինայի եւ շրջակայ քաղաքներու հայահոծ բնակչութեան համար, ճիշդ տարին ըլլալով, շքեղ փառատօն մը տեղի ունեցաւ, անցեալ Կիրակի, Յուլիսի 21ին, 2013, տեղւոյն «Վիքթորի» գրասպասին մէջ, կազմակերպութեամբ համագաղութային մարմինին (Armenian Community Coalition): Արդարեւ, սօնական միջնորդութեամբ կը տիրէր գրասպասի բովանդակ տարածքին վրայ, ուր հաւաքուած էին տարբեր տարիքի բազմահազար հայորդիներ: Այդ դալարագեղ վայրին մէջ տիրապետողն էր երգն ու նուագը, ինչպէս նաեւ՝ ընտանեկան եւ ընկերային ջերմ միջնորդութեամբ:

Շատ տպաւորիչ էին Սայթ Նովայի ծննդեան 300-ամեակին նուիրուած, տաղաւարը, ժողովրդային գործիքներու ցուցանմուշ-

թենէն ետք, համագաղութային մարմնի անունով ելոյթ ունեցաւ ժրջանատենապետ Խաչիկ (Քրիս) Շահինեան: Ան ողջունելէ ետք ներկայ հասարակութիւնը կոչ ուղղեց՝ կառչած մնալ մեր այրմատներուն եւ սատար հանդիսանալ համագաղութային մարմնի օգտաշատ ծրագիրներուն:

Օրուան հանդիսավար Վրոյր Պուղլուրճեան, ներկաներուն ծանօթացուց փառատօն այցելած բարձրատիճան անձնաւորութիւնները: Գոնկրէսական ձիւտի Չու իր ելոյթին մէջ շնորհաւորեց ամերիկահայերը եւ գնահատեց անոնց ներդրումը երկրի վերելքին: Ան այս առիթով փոխանցեց Ուաշինկթընի Գափթիթայի շէնքին վրայ ծածանող Ամերիկեան դօրշի մէկ նմուշը: Ողջունելի ելոյթներ ունեցան նաեւ

ըոյն տարագներով եւ գեղարուեստական ներդաշնակ կատարումներով արժանացան բարձր գնահատանքի:

Իսկ Սայթ Նովայի ժողովրդային երգերը չաջողութեամբ մեկնաբանուեցան շնորհալի երգիչներ՝ Նշան Զաղապպանեանի, Գէորգ Զազմագեանի եւ Սահակ Սիսլեանի կողմէ: Ելոյթ ունեցան նաեւ երգիչներ Տօնա Սարգիսեան, Արման

Մարտիկեան եւ այլ արուեստագէտներ եւս, խանդավառ միջնորդութեամբ հասցնելով իր գազաթնակատին:

Պարբերաբար եղաւ վիճակահանութիւն, բազմաթիւ ներկաներ ստացան շահեկան պարգեւներ:

Կը շնորհաւորենք համագաղութային մարմինը իր այս չաջող միջոցառումին համար:

Գ.Մ.



ներն ու մեծ աշուղին նուիրուած երգն ու երաժշտութիւնը: Ուշագորաւ էր նաեւ հին ինքնաշարժներու ցուցադրութիւնը:

Կէսօրէ ետք գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Ամերիկայի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրու-

Փաստորինայի քաղաքապետ Պիլ Պոկարթ եւ ուրիշներ:

Փառատօնն ունէր նաեւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը: Յաջողաբար ելոյթներ ունեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Նոր Սերունդ»-ի երկու պարախումբերը: Անոնք իրենց ու-

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Գործադիր Մարմին ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Գործադիր Մարմին, իր խորին երախտագիտութիւնը կը փոխանցէ, գաղութիս ազնիւ ու ազգատէր հայրենակիցներուն, որոնք աշխարհ եղած են, որեւէ համազգային եւ կամ հայրենակցական աղերսներու, քաջ գիտնալով, թէ իւրաքանչիւր Հայ անհատի բարոյական պարտաւորութիւնն ու նուիրումը անհրաժեշտ է, իր իսկ ազգի գոյապայքարին ու բարգաւաճման:

Գաղութիս հայրենակիցները խուճուրդով բազմութեամբ վայելեցին եւ նիւթաբարոյապէս օժանդակեցին? Յունիս 9, 2013ին կայացած HyeAID2 պարային երգահանդէսին, որ անգամ մը եւս իր արուեստի բարձրակարգ մակարդակով հմայեց ներկաները, որոնց վառ տպաւորութիւնները արձագանգեցին գաղութիս ներս:

Գործադիր մարմին իր օժանդակութեան զանազան աշխատանքներու կողմէ, մեծաթիւ անձնակազմով ու սպառնալի ջանքերով փորձեց յաջողութեամբ պսակել, վերջերս նմանատիպ գոյք ծրագիրները? HyeAID1-HyeAID2ը, որոնց յաջողութեան մէջ մեծ դեր ունեցան նաեւ մեծ ու փոքր հովանաւորներ, կամաւորներ, մամուլ եւ հեռատեսիլ ինչպէս նաեւ վարագոյրի ետեւ աշխատող համեստ անձնաւորութիւններ... Վարձերնիկ կատա՛ր արթուն եւ հարազատ հայրենակիցներ:

Սակայն... Սուրիահայութեան աղէտը իր արդար լուծումն ու խաղաղութիւնը չէ գտած... կը շարունակուի սարսափի ահն ու դողը... ամենօրեայ գոյութեան ու անհրաժեշտ սննդամթերքի չգոյութեան... Առ այդ, մեզմէ իւրաքանչիւրին ամենօրեայ հետաքրքրութիւնն ու ԼՈՒՄՍԻ հետաքրքրումը, պիտի գորացնէ՛ Սուրիահայ մեր եղբայրներուն եւ եղբայրներուն հաւատքն ու յոյսը, կառչած մնալու իրենց անհատական, ընտանեկան եւ համայնքի կեանքի պահպանման...

Եկէ՛ք միասնաբար առանց որեւէ ծրագրաւորումի եւ կամ ակնկալութեան, միացնենք մեր համազգային ջանքերն ու անհատական նուիրումը եւ մեր ազգային բարոյական տուրքը կեանքի կոչելով ամէ՛ն օր ամէ՛ն ժամ... փոխանցենք մեր տուրքէ գուրկ նուիրատուութիւնները Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմնի հետեւեալ հասցէով՝

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
P.O. BOX 1948, GLENDALE, CA 91209-1948
Փա՛նօր ու պատի՛ւ քե՛զ, գիտակից ու նուիրատու հայրենակից... Շուտափոյթ խաղաղութիւնը վերագտնե՛ս սիրելի սուրիահայ մայր գաղութ...
ԱՄՆԻ Արեւմտեան Շրջանի
Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ
Գործադիր Մարմին

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը կազմուած է Օգոստոս 2012ին հետեւեալ անդամներով.- Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Թեմ, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմ, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ Օգնութեան Միութեան Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Շրջան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն: Համացանցի հասցէն է՝ www.SyrianArmenianReliefFund.org:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇՏՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

massisweekly.com
updated every Friday

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԱՍԻՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՅԵՏ
«ՇՈՒՏՈՎ ԱՍՊԱՐԻՉ ԿԸ ԳԱՅ ՄԻ ՆՈՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ, ՈՐԸ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՀԱՍՑՆԻ ԻՐ
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԱԲԱՐՏԻՆ»**

Ժողովուրդը նոր ուժի է սպասում, որովհետև նախորդ ուժերը տարիների ընթացքում իրենց դէմքը ցոյց են տուել: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց «Սասուն» ջոկատի հրամանատար, նախկին ԱԺ պատգամաւոր Սասուն Միքայէլեանը:



Նախկին ԱԺ պատգամաւոր Սասուն Միքայէլեանը

- Պարոն Միքայէլեան, սոցիալական վատթարացող իրավիճակը, փոխշաղկապուած քանակացումները քաղաքացիական տարբեր խմբերի ուղի են հանել, սակայն նրանց միաւորող եւ առաջնորդող քաղաքական ուժ չկայ: Նման իրավիճակում ինչի՞ կարող է հանգեցնել նրանց պայքարը:

- Այս տարիների ընթացքում բոլորին մասնատել են, որ տիրեն եւ դա նրանց յաջողուել է: Բայց այսպէս այլևս հնարաւոր չէ: Մարդիկ արդէն գոյատեւման հարցի առաջ են կանգնած, չեն կարողանում ապրել, հետեւաբար առաջիկայում անպայման կը ծնուի թէ սոցիալական բուստ, թէ առաջնորդող ուժ:

- Յանկանում էք ասել, որ առաջիկայում նոր քաղաքական ո՞ւժ է ասպարէզ գալու:

- Այո առաջիկայում ասպարէզ կը գայ մի նոր քաղաքական ուժ, որը կը միաւորի ժողովրդին ու պայքարը կը հասցնի իր տրամաբանական աւարտին:

- Ասում են, որ ՀԱԿ-ը հիասթափուած է ԲՀԿ-ից եւ աշնանը բարձրացնելու է Սերժ Սարգսեանի իմպիչմենթի հարցը: Խօսքը ա՞յո, թէ՞ մէկ այլ ուժի մասին է:

- Դրանով ոչ մի հարց չի լուծուի: Ժողովուրդը նոր ուժի է սպասում, որովհետև այդ ուժերը տարիների ընթացքում իրենց դէմքը ցոյց են տուել: Եթէ նոր ուժ ձեւաւորուի, ժողովուրդը կը համախմբուի: Խօսքն այն մարդկանց մասին է, ովքեր այս տարիների ընթացքում իրենց դէմքը չեն կորցրել մնացել են իրենց սկզբունքներին հաւատարիմ: Նման մարդկանցով կարծում եմ շատ կարճ ժամանակահատուածում կը ձեւաւորուի այդ ուժը:

- Խօսքը ՀԱԿ-ից հիասթափուած եւ դուրս եկած ուժերի մասին է:

- Կապ չունի, թէ որ կառուցից են դուրս եկել: Խօսքը այն մարդկանց մասին է, որոնք այս տարիների ընթացքում մտածել են ժողովրդի, մեր երկրի ապագայի եւ մեր պետականութեան ամրապնդման համար:

- Ինչպէս հասկացայ Դուք պատրաստ էք առաջնորդել ժողովրդին:

- Ես միշտ պատրաստ եմ եղել ու հաւատարիմ եմ մնացել ժողովրդին՝ լինելով նրա կողքին: Այստեղ խօսքը ոչ թէ առաջնորդ լինելու մասին է, այլ ցանկանում եմ նոր ուժ ձեւաւորուի, որին մարդիկ կը հաւատան եւ կը վստահեն, որ երկրում նոր ընդդիմութիւն է ձեւաւորուելու, որը իր գործը հասցնելու է յաղթական աւարտին:

- Այսինքն՝ իշխանափոխութիւնը դեռ իրատեսակա՞ն էք հաւատում:

- Հիմա ես եմ հարց տալիս. իսկ այլ կերպ հնարաւոր է: Եթէ այսպէս շարունակուի մենք կորցնելու ենք, թէ մեր պետականութիւնը, թէ մեր ժողովրդին: Առաւելելու է թշնամին միշտ պատրաստ է յարձակման: Յաղթանակած ժողովրդի ազատամարտիկները

ըր այսօր բողոքի ցոյցեր են անում: Աստուած չանի, եթէ վաղը միւս օրը պատերազմ լինի, այսօրուայ, ապագայ, սերունդը ինչի՞ համար է գնալու կռուելու: Մարդկանց հոգեբանութիւնը պէտք է փոխուի, հաւատը պէտք է վերականգնուի: Ստացուած է մենք ամէն ինչ արեցինք, որ որոշ մարդիկ հարստանան: Դա էր ամբողջ իմաստը: Կարծես ազգի մէջ նոր ազգ է ծնուել: Մի չնչին մաս, որոնց հնարաւորութիւն, արտօնութիւն են տուել, ճնշում են սեփական ժողովրդին, ինչի արդիւնքում մարդիկ արտագաղթի ճանապարհն են բռնել: Այսքանից յետոյ ժողովուրդը դեռ չըմբոստանա՞յ:

- Պարոն Միքայէլեան Ռուսաստանում տեղի ունեցած ողբերգական միջոցով, շատերը դա Հայաստանի ուղղուած քաղաքական ապտակ համարեցին, սակայն մեր բարձրաստիճան պաշտօնեաները պաշտօնապէս չարձագանքեցին: Ինչո՞վ է պայմանաւորուած նրանց լռութիւնը:

- Ես չեմ ցանկանում գուգահեռներ անցկացնել, բայց տեսէք, Ադրբեյջանը Սաֆարովի հետ կապած թքեց միջազգային հանրութեան վրայ եւ այդ մարդուն հետ տարաւ իր երկիր եւ դարձրեց հերոս: Բայց Հրաչիկը, ով այդքան տարիներ պատերազմել, կռուել է ու գնացել է որդու շիրմաքարի համար Ռուսաստանում գումար աշխատելու, այսօր մեր ԱԳՆ-ն վախենում մի բառ ասել նրա պաշտպանութեան համար: Չէ որ դժբախտ պատահար է եղել իր կամքից անկախ: Ես արդէն չեմ հասկանում, թե՛ս այս իշխանութիւններն ինչ ազգ են:

- Անգամ հնարաւոր է, որ հրադարի խախտումն էր լինեն:

- Ո՞նց կարող է բացառուել. ես պատերազմից եմ խօսում, դու՛ հրադարից: Չի բացառուում, որ Ադրբեյջանը պատերազմ սկսի: Մենք միշտ պէտք է պատրաստ լինենք պատերազմին, թէ մեր աշխարհագրական դիրքով, թէ շրջապատուած դարաւոր թշնամիներով: Բայց նախ մենք պէտք է որպէս պետութիւն հանդէս գանք, թէ Եւրոպայում, թէ Արեւմուտքում, թէ Ռուսաստանում:

- Իսկ ստեղծած իրավիճակից դուրս գալու տարբերակներ ունե՞նք:

- Անկասկած, շուտով կը տեսնենք: Բայց այս պահին միայն այսքանը:

**ԶՐՈՒՑԵՑ
ՏԱԹԵՒ ՄԵՍՐՈՊԵԱՆԸ**

**ՌԱՄԻԼ ՍԱՖԱՐՈՎԸ, ՀՐԱՉԵԱՅ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԸ
ԵՒ ԷԼԻ ՇԱՏ ՈՒՐԻՇՆԵՐ**

ԱՐԱՄ ԶԱՔԱՐԵԱՆ

Երեք-չորս օր է՝ մամուլն ու համացանցը ակտիւօրէն քննարկում են Մոսկուայի մատուցներում, Պողոսկ քաղաքի մերձակայքում տեղի ունեցած վթարը: Բեռնատարը բախուել է աւտոբուսին, գոհուել են 18 հոգի, հիմնական մեղաւոր է դիտուում բեռնատարի վարորդ՝ ՀՀ քաղաքացի, 46-ամեայ Հրաչեայ Յարութիւնեանը, նա կալանաւորուած է:

Դժբախտ պատահարներ մեծաքանակ գոհերով, ցաւօք, լինում են բոլոր մեծ քաղաքներում, ցաւալին ու մեզ՝ հայաստանցիներին համար անընդունելին, ռուսական լրատուամիջոցների մի մասի արձագանքի, աւելի ճիշտ՝ դրա ձեւի ընտրութիւնն է: Դէպքից թեթեւ վնասուածքներով դուրս եկած Հրաչեայ Յարութիւնեանը դատարանի դահլիճ է բերուել կանացի ծաղկաւոր խալաթով ու լրատուամիջոցները տեսարանը հաճոցքով են ցուցադրում, ոչ ոք չի հարցնում՝ ինչո՞ւ կանացի խալաթով, ինչո՞ւ ոչ չիւանդանոցային հանդերձանքով կամ թէկուզ վթարից պատառոտուած հագուստով, ո՞վ է կնոջ խալաթ հագցրել Հրաչեայ Յարութիւնեանին:

Իսկ ես չիչեցի մարդասպան Ռամիլ Սաֆարովին: Մարդասպան Ռամիլ Սաֆարովին դատարան էին բերում տղամարդու սուղի տեսքով՝ կոստիւմ-փողկապ, Հրաչեայ Յարութիւնեանին՝ կնոջ խալաթով:

Մարդասպան Ռամիլ Սաֆարովի դատավարութեանը Ատրպէյճանի դեկավարութիւնն էր հետեւում եւ ի վերջոյ մարդասպանին «իրենով արեց» եւ ներում շնորհեց: Հրաչեայ Յարութիւնեանին նուստատեցնելու դէմ Հայաստանի իշխանութիւնից ոչ ոք չի ընդվզել, միայն ՄԻՊ կարէն Անդրէասեանն է Ռուսաստանին խնդրել, որ Յարութիւնեանի մարդկային արժանապատուութիւնը ոտատակ չտան:

Ռամիլ Սաֆարովը 2006 թուականին Բուդապէշտի քաղաքային դատարանի դատավճռով դատապարտուեց ցմահ ազատազրկման՝ 30 տարի առանց ներման թոյլտ-

ւութեան, սակայն՝ 6,5-7 տարի անց վերադարձաւ հայրենիք, Հրաչեայ Յարութիւնեանին սպառնում է մինչեւ 7 տարի ազատազրկում:

Ռամիլ Սաֆարովին դատապարտած ԵՄ անդամ Հունգարիան եւ Ռուսաստանը բնաւ համեմատելի չեն: Մարդասպան Ռամիլ Սաֆարովի եւ վարորդ Հրաչեայ Յարութիւնեանի համեմատութիւնը լացելու աստիճանի տիրուր է:

Ռուսաստանը կանացի խալաթ կը հագցնէ՞ր Հրաչեայ Յարութիւնեանին, եթէ նա լինէր Ֆրանսայի, Սպանիայի կամ ասենք՝ Էստոնիայի քաղաքացի: Ռուսաստանը կանացի խալաթ կը հագցնէ՞ր Հրաչեայ Յարութիւնեանին, եթէ գազի գնի բարձրացմանն ի պատասխան՝ Յարութիւնեանի երկիրը վերանայէր ռուսական ռազմաբազաների տեղակայման պայմանները: Ռուսաստանը կանացի խալաթ կը հագցնէ՞ր Հրաչեայ Յարութիւնեանին, եթէ ռուսական զօրքերը չմասնակցէին Յարութիւնեանի երկրի անկախութեան զօրահանդէսին: Ռուսաստանը կանացի խալաթ կը հագցնէ՞ր Հրաչեայ Յարութիւնեանին, եթէ միջազգային դիտորդների գնահատմամբ կեղծուած ընտրութիւնը Ռուսաստանը օրինական չճանաչէր: Եւ այլն, եւ այլն, եւ այլն...

Ինձ թւում է՝ ես գիտեմ, թէ ինչո՞ւ է Ռուսաստանը կանացի խալաթ հագցրել Հայաստանի քաղաքացի Հրաչեայ Յարութիւնեանին: Գիտեմ նաեւ, թէ ինչո՞ւ է Հայաստանի քաղաքացի Հրաչեայ Յարութիւնեանը Ռուսաստանում վարորդ աշխատում՝ հաստատ կանացի խալաթ հագնելու համար չի: Բայց դէ իմ իմանալ-չիմանալը առաջնային չի: Իսկ ում տեղեկացուածութիւնը առաջնային է՞ լռում է: Ու դրա համար Ռուսաստանը բարձրացնում է գազի գինը, մասնակցում մեր անկախութեան զօրահանդէսին ու ՀՀ կասկածեալ քաղաքացուն կանացի խալաթ հագցնում:

Ուզում եմ լացել եւ արտագաղթել, կամ արտագաղթել ու լացել: Արտագաղթել հաստատ ուզում եմ, լացել՝ դեռ չեմ հասկանում:

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
 626-354-5924 • vamedia@yahoo.com

ԻՏԱԼԻՈՅ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԳԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇ ՏԱՐԻԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄԸ ԻՏԱԼԻՈՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԳԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԵՐԱՆ
(Շար.ու.նա.կու.ած.նախորդ քիւնէն)

Լեռնաշղթան հարուստ է աղբիւրներով եւ հոսող վարար գետերով, որոնք գոյանում են ձմռան սառնամանիքին առատ ձիւնի տեղանքից խմելու ջուր եւ ելեկտրականութիւն հայթայթելով հակայ Թեհրանի եւ շրջանների բնակչութեան համար:

Հինգ ղօչաղ (կտրիճ) երիտասարդներ տաքուկ հագնուած, սապոկները ոտքներին, ձեռնափայտը ձեռքներին, համաչափ քայլերով, իրենց առջեւը ունենալով Անդրանիկին քայլում են արահետներով սարն ի վեր: Դեռ արեւը մնում էր էն շատ հեռուները, ոչ ցոլքն էր երեւում եւ ոչ էլ գլուխը, միայն գնալով երկնակամարը կաթնագոյն էր դառնում:

Գարնանային եղանակ էր, սակայն բարձունքներում սառը քամին փչում էր անսանձ, այս կողմերում մինչեւ գարնան վերջերը գիշերուայ ընթացքում խստաշունչ կծող ցուրտ է, գագաթներին ձիւնը նստած, միայն արեւի ծագելու հետ օդը որոշ չափով տաքանում է:

Փոքրիկ Ղոկատը լուռ ու խոհուն, զգոյշ քայլերին ձեռնափայտերի օգնութեամբ, շղթայի օղակների նման մէկը միւսին հետեւելով, վիթխարի լեռան գանգուածի գառիվերն էին բարձրանում հանդարտ ու խաղաղ:

-Ախպրտի՛ք ջան, ականջ արէք ինձ:

Անդրանիկն էր տղաների առջեւը բարձրին կանգնած, գաւազանին յենուած, բամբ որոտան ձայնով խօսքը ուղղած ընկերներին:

-Ինչպէս ասել եմ ձեզ, էսօր կարեւոր հարցի համար եմ ձեզ բերել էստեղ, դրա մասին կը խօսեմ, երբ նախաճաշի նստեցինք, դէ՛հ, տղերք ջան, շարունակենք մեր ճամբան մինչեւ արեւը լաւ բացուի, իր ճառագայթները կենսատու փոռի բոլորիս վրայ եւ օդը տաքանայ, քայլենք մէկս միւսին ուշադիր եւ հոգատար:

Տղաները ընկան մտքերի մէջ,

ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՐ ՀԵՂԻՆԱԿ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՔԵՏԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

Վերջերս հաճելի անակնկալը ունեցալ ստանալու «Հայրենի աղբիւր»-ի միջնակարգի չորս կարգերու ակնահաճոյ ու ճաշակաւոր, հայեցի ու հայաբոյր ձեւաւորումով հատորներու նորագոյն հրատարակութիւնները: Ինծի համար շարքը նորութիւն չէ. անոր բովանդակութեան վերահասու դարձած եմ մօտաւորապէս երկու տասնամեակ առաջ եւ տրամադրութեանս տակ ալ ունեցած եմ քանի մը լրիւ շարքեր իւրաքանչիւր կարգէն, եւ երկար ապրած եմ անոնց մտերմութեան մէջ՝ շատ յաճախակի թերթատումներով ու վերընթերցումներով. սակայն տարիներուն հետ այդ օրինակները շոգիացան, քանի որ գանազան ծնողներ եւ աշակերտներ, չեմ գիտեր ինչու եւ ինչպէս, սովորութիւն դարձուցած են ինձմէ իրենց պակտող դասագիրք մը կամ դասագիրքեր ինդրել, իսկ ես միշտ ալ սիրալոյսով ընդառնած եմ անոնց խնդրանքին: Այսպէս է որ այլազան դասագիրքերու ամբողջական շարքեր ձեռքս ելած ու գտած են իրենց հասցէատէրերը, իսկ ես մնացած եմ...առանց որեւէ նմուշի: Բան մը որուն համար չեմ ամսուսար անշուշտ:

Հայրենի աղբիւրներու այս նոր հատորները կը կրեն արդէն՝ Գ.Ե, իսկ երբեմն ալ Դ. տպագրութիւնեան նշումները, ինչ որ ինծի համար ըմբռնելի է երկու թելադրանքով. նախ անոնց երկարամեայ ու անընդմէջ կիրարկութիւնը, որով բնական էր, որ պահեստները սպառէին եւ պէտք ըլլար հրատարակել նորերը, իսկ երկրորդ պատճառը հեղինակին կատարելութեան ձգտումն է. Քիւրքեան այն հեղինակն է (եւ անհատը, ինչպէս կը ճանչնամ զինք մօտաւորապէս լիստեն տարիէ ի վեր), որուն միտքը ոչ մէկ տեղքայլ ու լծացում կը ճանչնայ, հետեւաբար նորին փնտռութիւնն ու կատարելութիւնն ձգտումն ալ պիտի մղէին զինք, որ միշտ վերանայելու, վերանորոգելու ու վերանորոգուելու (ուրեմն նաեւ վերահրատարակուելու) ձգտումը երկրորդ բնութիւն մը դառնար, ու իրօք ալ դարձած է ան, իր մէջ, բան մը, որուն բոլոր դրական արդիւնքները երեւելի են այս չորս շքեղ հատորներու երկայնքին:

Արեւմտահայ իրականութիւնը հաւանաբար այնքան ալ պէտք չու-

նենար ուշացած գրախօսիս այս տողերուն, քանի ես արդէն կը գրեմ հանրօրէն ծանօթ իրողութեանց մասին միայն, այսուհանդերձ արդար ու պարկեշտ տուրք մը, թէկուզ ուշացումով հատուցուած, կը կարծեմ, միշտ ալ ընդունելի կամ գէթ հանդուրժելի պէտք է ըլլայ: Քիւրքեան արեւմտահայ մանկավարժական մտքի երկար շղթային մէջ ունի իր ուրույն տեղը. ան երկարամեայ հետեւողականութեամբ իր մէջ համատեղած ու նոր բարձունքներու հասցուցած է այն բոլոր դրական գիծերը, դրոյթներն ու աւանդոյթները, որոնք ահա աւելի քան երկու դարէ ի վեր հաստատուած են մեր մէջ՝ սկսած 1790-ական թուականներէն, երբ հաստատուեցան առաջին արեւմտահայ դպրոցները ու գրուեցան առաջին դասագիրքերը: Իր վաստակին որակով ու քանակով, ան ամբողջ հաստատութիւն մըն է, որ կը բովանդակէ՝ ա) միջնակարգի ներկայ չորս հատորները. բ) որոնց կ'ընկերանան քերականական-լեզուական չորս այլ հատորներ. գ) հանդերձ ուղեցոյցով մը, որ կը դրուի դասաւանդող ուսուցիչին տրամադրութեան տակ. դ) ասոնց վրայ գումարած գրականութեան երկու հատորները՝ բարձրագոյն կարգերու համար. ե) անգլիախօսներու եւ ֆրանսախօսներու յատուկ հայերէնի ուսուցման ձեռնարկներու. զ) եւ վերջապէս գրական երկերու խտացուցած-պարզացուած մատենաշար մը, որ կը միտի հրապուրել ընթերցասէր դպրոցականները: Այս բոլորին իրագործումին մէջ Քիւրքեան մնացուն գործակից ունեցած է Մարտ քիւրքեանը, որ երբեմն նաեւ հեղինակակից է իրեն:

Միջնակարգի ընթերցարաններէն, որոնք մեկնակէտ կը հանդիսանան մեր այս նշմարին, իւրաքանչիւրը բաղկացած է միջին հաշուով 150 էջերէ եւ դարձեալ միջին հաշուով՝ 25 հատուած-դասերէ: Այս ծաւալները ընտրուած են այն նախատեսութեամբ ու հաշիւով, որ դպրոցական տարեշրջանի աւարտին ոչ մէկ դաս դուրս մնացած ըլլալ, քանի բոլոր հատորներն ու գանոնք կազմով գլուխները շարադրուած են գիրար աստիճանաբար զարգացնելու ու գիրար ամբողջացնելու տրամաբանութեամբ: Այնպէս որ կարելի է կամ աւելի ճիշդը՝ մեղք պիտի ըլլար, որ այս հատորները ընտրու-

վի կամ հատուածաբար կիրարկուէին: Պէտք է դասատուն այնպէս մը կազմակերպէ իր ժամանակն ու դասաւանդութիւնը, որ տուեալ հատորը աւարտէ համապատասխան տարուան ընթացքին, եւ եթէ կարելի չէ հեղաւ այդ, ապա ան լրացուի յաւելեալ դասապահերով, իսկ յոռեգոյն պարագային՝ շարունակուի յաջորդ տարի եւս, թէկուզ կարգի խախտում յառաջանայ այդպէսով:

Ինչ կը վերաբերի հատուած-դասերուն, ապա ասոնք իրենց կարգին իմբուած են բնաբաններու շուրջ. իւրաքանչիւր բնաբանի մէջ կը մտնեն միջին հաշուով 5-6 հատուածներ՝ վերցուած առհասարակ հայ գրականութենէ (արեւմտահայ թէ արեւելահայ), իսկ երբեմն ալ բնաբանի ծաղկումին սատարող օտարալեզու գրականութենէ հատուածներ, որոնց բոլորն ալ կը յատկանշուին իրենց թարմութեամբ, խորագոյն ճաշակով, գեղարուեստական ցանկալի մակարդակով, այլեւ գանոնք օգտագործող պատանիներու տարիքային ու իմացական մակարդակներու առաւելագոյն նկատառումով: Ոչ մէկ անտեղի կամ անմարսելի հատուած մտած է չորս հատորներուն մէջ. գրաւիչ են բոլորն ալ, ժպտուն, երգեցիկ ու կենսախիւն: Կը մնայ որ ճիշդ տեսնուին ու ճիշդ սերտուին անոնք, եւ ճիշդ կազմակերպուի դասը ուսուցիչին կողմէ:

Այս նպատակին համելու համար՝ հեղինակը դիմած է խաղին պահանջած բոլոր միջոցներուն: Նախ իւրաքանչիւր բնաբան ունի իր մօտաւորապէս մէկ էջանի մուտքը, որ կը ծառայէ տուեալ բնաբանի ծաօթացումին: Սա յարաբերաբար ընդհանրական բնոյթ ունի, որ աւելի կ'առնչուի պատանիներու մտային զարգացումին: Կը հետեւին բնաբանը կազմող հատուածները, որոնցմէ իւրաքանչիւրը իր կարգին օժտուած է աւելի փոքրիկ մուտքով մը, որ պիտի ծառայէ ընկալելի դարձնելու տուեալ հատուածը կամ օրուան դասը: Խոհանոցային բուն աշխատանքը, ես պիտի ըսէի՝ մեծ ու անխառն վայելքը, կը սկսի այս նախապատրաստութիւններով, երբ ուսուցիչ եւ աշակերտ միասնաբար՝ բացատրական ընթերցանութեան ճամբով պիտի բանան սերտուող հատուածին թաքուն ծալքերը: Եւ իրօք ալ նախադասութիւն առ նախադասութիւն եւ պարբերութիւն առ պարբերութիւն կը բացուին այդ ծալքերը՝ ամէն անգամ քիչ մը աւելի լուսաւորելով ընթերցողին միտքը ու քիչ մը աւելի գայն կապելով սերտուող հատուածի

հմայքին՝ շնորհիւ այն խելացի ու թելադրական հարցումներուն, որոնք ուղղուած են հատուածին կից, էջի աջին եւ այն նոյն մակարդակով, ուր կը գտնուի լուսաբանելի նախադասութիւնը կամ պարբերութիւնը: Այսպէս աւարտող իւրաքանչիւր հատուած նոր յաղթանակ մըն է աշակերտին, բայց նաեւ ուսուցիչին համար, ինչպէս նաեւ պարագայական ոեւէ ընթերցողի համար, որոնց աչքերը անկասկած պիտի ճառագայթեն գեղարուեստական անխառն հաճոյքի մը տուած վայելքի սքանչացումով: Ուրիշ բառով կարելի է բնորոշել այդ ընթերցումները. անոնք սքանչացումի մէկական անկորնչելի առիթներ են արդարեւ: Այս բոլորը հաստատելու համար կարելի է մխրճուիլ Հայրենի աղբիւրի էջերուն առանց դպրոցական ըլլալու ալ, մանաւանդ յայտնաբերելու համար, թէ ինչ կը նշանակէ խելացի ընթերցում կատարել, իսկ անկէ անդին գրականութիւն սիրելը, գրականութիւն գնահատելն ու ընթերցասէր դառնալու ճամբան մեծապէս պիտի հեշտանան:


Հատուածներու ուսուցողական դերը այստեղ չի վերջանար: Իւրաքանչիւրին աւարտին կը գտնենք տակաւին մէկ-երկու այլ հարցումներ, որոնք կ'առնչուին հատուածի ընդհանուր բովանդակութեան գնահատումին եւ իւրացումին, եւ որոնցմէ իւրաքանչիւրը կրնայ նիւթ հայթայթել բանաւոր կամ գրաւոր փոքրիկ շարադրութեան մը, առնուազն պարբերութեան մը կազմութեան: Ապա կը հետեւի բուն շարադրութեան նիւթը, որ այլեւս առեղծուածային ու անկապակից յանկարծաբանութիւն մը պիտի չըլլայ երբեք, այլ ամբողջ դասի ընդմէջէն քայլ առ քայլ սաղմնաւորուած ու հասունացած գաղափարներու ստեղծագործական համադրում մը, որ պէտք է յաջողի դիւրաւ ընել պատանին: Որուն վարձատրութիւնը պիտի ըլլայ այն, որ այս բոլորէն ետք ան պիտի աւելի իմաստնանայ, աւելի մարդկայնանայ, աւելի հայնանայ:

Բացատրական ընթերցանութեան կողքին իւրաքանչիւր հատուածի կը հետեւի լեզուական-գործնական աշխատանքներու շատ կոկիկ փունջ մը, որ կ'ընդգրկէ լեզուի բոլոր կրթանքները՝ բառագիտական, բառակազմական, ձեւաբանական, շարահիւսական եւ այլն, որոնց բոլորը կը բխին սերտուած հատուածի լեզուական միջավայրէն տրամադրուող ատաղձէն եւ ձեւով մը անոր գործնականացումն

Շար.ք էջ 19


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՅՈՎՐԱՆՆԵՍ ԶԱՆՆԵՍԵԱՆ 1929-2013

ԱԼՊԵՐՄԻՆԱՍԵԱՆ

Գրեթէ անկարելի է իրարմէ բաժնել «Հայ Ժողովրդական երգը», «Շիրակէն», իսկ «Շիրակ» երգարանները Յովհաննէս Հաննէսեանէն:

Յիսունէ աւելի երկար տարիներու վրայ ընթացող մեր բարեկամական եւ ընտանեկան կապերը Գեւորհան-Հաննէսեան ընտանիքներու հետ, իմ ուսիս կը դնէ այս դժուարին պարտականութիւնը՝ գրել Յովհաննէսի մասին, անոր նախասիրութիւններուն եւ ծանր ու լուրջ շուքին մասին:

Պատանի էի, 1957ին, երբ առաջին անգամ գիրար տեսանք «Federal Bank Du Liban»-ի գրասենեակը:

Քոչրս՝ Սօսի Գեւորհանը, որի հետ նոյն գրասենեակը կ'աշխատէինք, Յովհաննէսին ընտրեալը որպէս կեանքի ընկեր, աւելի խթանեց մեր բարեկամական մտերմութեան կապերը:

Այն ինչ որ սկսաւ Լիբանանի մէջ, շարունակուեցաւ Լոս Անճելոսի մէջ աւելի քան երեսուն տարիներ:

Հակառակ չէր կատակելու եւ գուարթախօսութեան, բայց իր օրուայ ժամերու առիւծի բաժինը կը գրաւէին իր շատ լուրջ գրական աշխատանքին եթէ կարենար օրուայ ժամերը 24էն 48 ժամի վերածել ինք «Մեծ Այո» մը պիտի ըսէր, յատկացուելով աւելի քան 75/100ը կարգալու եւ գրելու:

Իր հետաքրքրութեան առարկայ եղած էին ֆուտպոլը, գոր խաղաց իր երիտասարդ օրերուն Հ.Մ.Մ.ի «Փարամագ» խումբին, թատրոնը, երգահանդէսները եւ ասմունքի երեկոները:

Դասն ու դպրոցը Յովհաննէսի առաջին սէրն էր, ան աւարտեց Սահակեան վարժարանի այդ օրերու ճրգ դասարանը եւ ապա շարունակեց իր ուսումը Պէյրութի ճեմարանը եւ շրջանաւարտելէ վերջ ան վերադարձաւ իր նախասիրած Սահակեան վարժարանը, տնօրէն Բենիամին Ժամկոչեանի հրաւերով. դասաւանդելու աւելի քան 6-7 տարիներ:

Յովհաննէսի կեանքը 360 աստիճան դարձուածք մը ըրաւ, երբ եղբայրը՝ Կարապետ տպարան մը բացաւ եւ ինք զգաց թէ իր ներկայութիւնը այդ գործին մէջ աւելի կարեւոր էր, քանի Կարապետը տպագրութեամբ կը զբաղէր, իսկ ինքը՝ մնացեալով:

Եւ կեանք առաւ «Շիրակ» երգարանը՝ Յովհաննէսի լուսագոյն եւ մեծագոյն կտակը Սփիւռքահայութեան, յատկապէս 1950 ական թուականներուն, ուր միայն լսելի էին «Շարքիները» մեր բոլոր առիթներուն ու Շիրակ երգարանի յայտնութիւնը ստեղծեց այդ արթնութիւնը, վերադառնալու մեր օր-



րանը, հայ երգի եւ պարի աշխարհը: Տարիներ նոր՝ երգարանը նոր, միշտ աւելի զարգացած եւ աւելի հաստատիր: Ձայնագրեալ, լեցուն տեղեկութիւններով երգիչներու, երաժիշտներու եւ հեղինակներու մասին:

Միշտ պատնէշի վրայ, Յովհաննէսը չգոհացաւ միայն երգարաններով, հրատարակեց աւելի քան 150 հատորներ, աշխուժացնելով գրական շրջանակը, յատկապէս բառարաններու շարք մը, եւ պարբերաթերթեր, ամսագրեր եւ այս բոլորին կողքին միացեալ նահանգներու մէջ ալ հրատարակեց «Գաղթը վէրքով ու Երգով», հատորը, իր կեանքի եւ մեր կեանքի արկածախնդրութիւնը:

Կարելի չէ խօսիլ Յովհաննէսի մասին եւ չլիզել իր կեանքի լաւագոյն ընկերը՝ Սօսին (Գեւորհան), սապէս ըսած իր «Life insurance»-ը, այո՛, Սօսին եղաւ այս հսկայ կադրիին կունակ կեցող նեցուկը, եւ իրենց յիսունէ աւելի երկար տարիներու երջանիկ օճախը ճոխացաւ երկու աննման մանչ գաւակներով՝ Շահէն եւ Հրաչը, որոնք այս աննման գոյգին շուքին տակ դարձան արժանաւոր գաւակներ, եւ ճոխացուցին իրենց ընտանիքը անուշիկ թոռնիկներով:

Յովհաննէսը վերջին տարիներու դժուար օրերուն իր թոռնիկները եղան իր դեղահատները, տալով իրեն սէր եւ ուրախութիւն:

Սօսին վերջին մի քանի տարիները եղան իր կեանքին դժուարագոյն հանգրուանը, երբ Յովհաննէսը առողջութիւնը սկսած էր իր վայրէջքին, հասաւ այն օրը եւ Տէրը գինք կանչեց իր մօտ, սուգի մատնելով իր հարազատները եւ անթիւ ու անհամար բարեկամները:

Իր ժամանակին, մենք լուսարձակի տակ պիտի առնենք Յովհաննէսի կեանքն ու վաստակը, բայց այսօր մեր ցաւակցութիւնները կ'երթան մեր բոլորին սիրելի Սօսին, Շահէին, Հրաչին, թոռնե-

ՅԱԵՐԺԱՓԱՅԼ ՔԱՐՄԵՆ ՄԱՐԹԻՆ

Շողուն հայեացքը կապոյտ երկնքի, Նայիրեան երկրում ձայնը կը հնչի.

Լոյսեր են պատել ամբողջ աշխարհին, Անխախտ հւատքով մեր սերունդներին:

ԱՍՏՈՒԱԾ
Յայրենիք, Յայոց լեզուն,
Չանգերն են հնչում մեր սուրբ վանքերի,
Յաւատքի հոգով անմար սրտերին:

Փա՛րքուպատիւմերագինհայոց,

Կերտող, շինարար իր արուեստներով,
Ոսկեղնիկ տառերն երկնային աստղեր,
Կարկաչ հնչիւնով քաղցր, աներեր:

ԱՍՏՈՒԱԾ
Յայրենիք, հայոց լեզուն,
Դեղնաւուն աշնան ծով բարիքներով,
Կանաչ ու զմրուխտ գարունն է գալիս,
Յրաշք հայրենիք Յայաստան ազատ,
Մեր չքնադագեղ երկիր Նայիրեան:

ՆԱՐԱՏԱԿՆԵՐԻՆ ԳՐԻՇ ԴԱԹԵԱՆ

Մեր սրտերի մէջ բուսել են ծաղիկներ,
Ծաղիկները ձեր սիրոյ,
Նուիրումի ծաղիկները անթառամ
Ու բիւրաւտ,
Կեանքի, սիրոյ ու քաղցրութեան վայելքով:

Բայց եւ պատած
Ձեր սրբազան հուր վրժի փուշերով,
Ձինաւորուած ու զինավառ
Ասպետական մեր ուխտով,
Որ տանում ենք
Ու կտանենք
Նուիրական մեր պայքարը
Ետ խլելու ձեզ մահից,
Ետ խլելու իրաւունքը ձեր կեանքի,
Մեր կեանքի ու ժառանգութեան իրաւունքը անժամանց,
Որով դոփում է մեր սիրտը,
Ընթացք տալիս մեր կեանքին,
Ոգի բաշխում
Յայրենիքին մեր ծաղկոյ,
Որ տարածուի
Ու ընդգրկի
Ձեր սուրբ արեամբ ոռոգուած
Յայ դաշտերը,
Յայ սարերը,
Յայ ձորերը,
Յայաստանը ամբողջական փառապանծ:

Մեր սրտերի մէջ են բուրում
Ծաղիկները ձեր շնչի,
Ձեր խօսքի ու պատգամի,

Որով ձեր սէրը խոստացաք
Ձեր սիրածին,
Մեր մայրերին,
Մեր հայրերին,
Յայրենիքին, հայրենիքին սիրատուն:

Ու բուրեցին ծաղիկները վարդացած,
Որ բուրում են ձեր իղձերով,
Որ բուրում են մեր կեանքում,
Իմաստ տալիս մեր սիրոյն,
Ժողովրդին, հայրենիքին,
Մեր սիրոյն,
Եվ սերունդին,
Որ եղան մեր ծնողները,
Որ մենք եղանք
Ձեզ հարազատ ժառանգորդ,
Ու սերունդին,
Որ ծաղկում են մեր սիրոյց,
Ու տօնում են հայրենիքը
Յայրենական զեղումով,
Նուիրումվաճարողականսրբագին:

Մեր սրտերի լայն դաշտերը
Ծաղկավառ են
Ձեր երփներանգ գոյներով,
Որ մեր կեանքի հենքն են լցնում
Աւանդական իմաստով,
Բովանդակութեամբ բանի,
Ծիածանով կամարակապ,
Որ գրկում է հորիզոնը
Յայրենիքի բովանդակ:

Մեր սրտերի մէջ են բուսել
Ծաղիկները ձեր սիրոյ,
Ձոռողութեան ու կտակի
Ծաղիկները անթառամ:

րուն Հաննէսեան, Գեւորհան ընտանիքներուն:
«Շիրակաչէնը» առանց Յովհաննէսին... Այո՛, իր աթոռը թա-

փուր պիտի մնայ ամէն շաբաթ օրերը:
Հողը թեթեւ գայ վրադ՝ «քեռայր»:



VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE

THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES

Չարիքն առօրեական ու սովորական է

ՇԱՔԷՆԻԻՑԵԱՆ

Չարիքն առօրեական ու սովորական է այն ժամանակ, երբ հասարակութիւնը դառնում է անտարբեր 20/07/2013 , Գրական թերթ Յուլիսի 15-ին Հայաստանի պետական ֆիլիսարմոնիայի Առնօ Բաբաջանեանի անուան համերգասրահում տեղի ունեցաւ իսրայէլցի գիտնական, պատմաբան Յաիր Աուրոնի «Անընդունելի անտարբերութիւն» գրքի հայերէն հրատարակութեան շնորհանդէսը:

Մեծ եղեռնի մասին ճշմարտութիւնը պատմելու համար հեղինակը արխիւային ծաւալուն հետազոտութիւնների հիման վրայ վերլուծում է անցած դարասկզբի պաղեստինեան հրէական համայնքի եւ սիոնիստական շարժման ղեկավարների վերաբերմունքը Հայոց ցեղասպանութեան հանդէպ՝ քաղաքական ուժերի դիրքորոշումների, ինչպէս նաեւ գուտ բարոյական տեսանկիւնից: Ըստ ՀԳՄ նախագահ Լ. Անանեանի՝ «Անընդունելի անտարբերութիւն» գրքով Աուրոնը, արխիւային նորայայտ փաստերի հիմքով բարձրաձայնելով ճշմարտութիւնը Հայոց ցեղասպանութեան մասին, մի կարեւոր քայլով մօտեցնում է ողջերի եւ մեռելների աշխարհում ապրելու «երկկնցադութեան» վերջնական լուծումը:

Համեմատութիւն անցկացնելով հայերէն եւ անգլերէն վերնագրերի միջեւ՝ նա անդրադառնում է դրանց սկզբունքային տարբերութիւններին: Ըստ նրա՝ անգլերէն տարբերակը «Անտարբերութեան առօրեականութիւնը» աւելի ստույգ է տալիս այն բանային, որ բացում է հեղինակի ասելիքը: ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն Աշոտ Մելքոնեանը Յաիր Աուրոնին բնութագրեց իբրեւ խիզախ ու անաչառ հեղինակի, ում հետաքրքրում է այն խնդիրը, թէ ինչպէս կարող է ցեղասպանութիւն ապրած ժողովուրդը մոռացութեան տալ Հայոց ցեղասպանութիւնը: Ըստ Ա. Մելքոնեանի՝ հեղինակն իր ինը գլխից բաղկացած գրքում Հայոց ցեղասպանութիւնը համարելով Հրոլքոսթի նախերգանք, փաստում է այն միտքը, որ թէ ժամանակին դատապարտուէր Հայոց ցեղասպանութիւնը, Հրոլքոսթը տեղի չէր ունենայ: Գրող, հրատարակախօս Զօրի Բալայեանը ցաւով նշեց, որ գիրքը 14 տարի ապրել, գործել,

աշխատել է իսրայէլում, բայց Հայաստանում այդ մասին չէն իմացել, այնինչ պարզում է, որ դա միակը չէ: Նա ընդգծեց այն միտքը, որ առհասարակ ցեղասպանութիւնն ընդունում են բոլորը, ուրիշ հարց է ղեկավարների պահուածքը. ցեղասպանութիւն չեն ճանաչում պետութիւնները: Քննեթի նախկին պատգամաւոր Յաիր Յաբանը նշեց, որ 24 տարի պայքարում է, որպէսզի չուրացուի Հայոց ցեղասպանութիւնը: Նա խոստովանեց, որ հպարտանում է փաստերի բացայայտման մէջ բազմաթիւ հրէաների դերակատարութեան ու վկայութեան, Ֆրանց Վերֆել ունեցող ազգի գաւազը լինելու համար: Եւ ամաչում է, որ իր երկիրը դեռեւս քաջութիւն չունի ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը եւ Ապրիլի 24-ը նշելու պաշտօնական օրացոյցում: Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը ինստիտուտի գիտխորհրդի կողմից Յաիր Աուրոնին պարգևատրեց «Ֆրանց Վերֆել» Ոսկէ մեդալով: Յաիր Աուրոնը շնորհակալութիւն յայտնեց բոլոր աջակիցներին եւ յոյս յայտնեց, որ գիրքը կը դառնայ հայ հասարակութեան սեփականութիւնը: Նա խոստովանեց, որ իրեն յուզում է, թէ ինչո՞ւ իսրայէլը չեղաւ Հայոց ցեղասպանութիւնն ընդունող առաջին երկիրը:

«Մենք պայքարում ենք նաեւ ապագայի ցեղասպանութիւնների դէմ, մենք՝ հրեաներս ու հայերս, չենք կարող լինել այն ազգերից, որ կ'իրականացնեն ցեղասպանութիւններ, չենք կարող անտարբերութեամբ նայել, թէ ինչպէս է տեղի ունենում մէկ այլ ազգի ցեղասպանութիւնը: ...Համոզուած եմ, որ ժխտելով հայ ժողովրդի նկատմամբ իրականացուած ցեղասպանութիւնը, մենք պղծում ենք մեր սեփական Հոլոքոսթի ժառանգութիւնը», - ամփոփեց հեղինակը: Շնորհանդէսի ընթացքում հատուածներ ընթերցուեցին «Անընդունելի անտարբերութիւն» գրքից: Երաժշտական կատարումներով ելոյթ ունեցաւ Երեւանի պետական կամերային երգչախումբը: Գիրքը ուսուցիչից թարգմանել է Աննա Սաֆարեանը, առաջաբանը գրել է Զօրի Բալայեանը: Գրքի հրատարակութիւնն իրականացրել է մոսկուաբնակ գործարար Կարէն Բաղդասարեանը:

ԽՆՈՒԱՑՈՂ ԲԱՆԵՐ

ՋԱՆԻԲԵԿ ԶԱՆԻԲԵԿԵԱՆ (ԿՈՇԵՑԻ)

Ոչ մարդ գարմացնող եմ եղել, ոչ էլ մտքովս անցել է ինքս ինձ գարմացնել, երբ հիմանականում՝ սովորական բանուորութեամբ ապրող մարդու ճամբայ է եղել իմս: Եւ ոչինչ, որ շատ լաւ ապրեցնող պայմաններ չեմ ապահովել, բայց ընտանեօք երբեք դժգոհանքի խմոր չենք շաղել: Այո, ես ու սիրուած կինս՝ Էմման, եւ էլ աւելի սիրելի մեր երեխաների հետ՝ համերաշխ առօրեայ ապրելով ենք առաջացել:

Եւ, անշուշտ, պատկերացումներ չէի սնում, թէ ծերութիւն ասած բանը տեղ հասնելուց յետոյ երբեմնի երազանքներս իմ առաջ՝ մի նոր ճամբաբաց են անելու, եւ հենց մեր տան մէջ ինձ առանձին սենեակ է յատկացուելու: Ինչպէս նաեւ շատ անգամ եմ ասել, որ ժամանակաւորապէս օտարութեան ի վեր՝ այդ սենեակ-խուցն իմ աչքին՝ մեր վանքածորի քարայրներից մէկն է երեւացել, որում՝ քարապատ առաստաղից գլխիվար կախուած չղջիկները լռին հանդիսատես են լինելու...

Այսպիսին էր բանը, երբ կարծես շատ-շատ երկարատեւ քնից արթնացայ ու թուղթ-գրիչի ձայնեղ կանչերն առա...

Ու թէեւ այդ կանչ-գրնագրերը տասնամեակներ շարունակ լսում էր իմ ներաշխարհում, բայց անդրադառնալու հնարաւորութիւնը բացառուած էր: Յանուն որի, նոյնիսկ չէի կարող երազել, թէ մի նոր ժամանակաշրջան է սկզբնաւորուելու, եւ այդ նորովի հնարաւորութեամբ՝ ես ու ես եմ մնալու...

Ասել է, թէ ես ու ես շալակիս քթոցը վար բերելուց ի վեր՝ 15 տարի է բոլորում, եւ 15 գրքեր հրատարակուելուց յետոյ էլ՝ տակաւին շալակիս քթոցի յատակին բաներ կան ու բաներ են խլուլում...

ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐՕՏԵԱԼ ԵՐԱԺԻՇՏ-ԵՐԱԺԻՇՏՈՒՅԻՆԵՐՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ
(Պատուոյ փրոֆէսոր Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերւատորիա)

Սոյն նպատակով գրուած վերջին խնդրագիրս միշտ երեք տարի առաջ էր եղած:

Վստահ եմ, որ անդրադարձած եմ մեր ընթերցասէր հասարակութիւնը եւ յատկապէս սոյն ազնուական հայորդիները, որոնք մեծ հաւատարմութեամբ իրենց սրտարուխ նուէրներով, գումարներով հայրենի մեր կարօտեայ երաժիշտ-երաժիշտուհիներուն (Երիտասարդ եւ տարեց) օգնութեան հասնիլը ընդմիջուած էր երեք տարիներ ի վեր, որովհետեւ վերջին երեք տարիներուն առողջական բաւականին բարդ եւ ծանր դժուարութիւններուն մատնուած ըլլալով եւ չկարողանալով մամբորդել Հայաստան, ցաօօ սրտի սոյն սրբազան առաքելութեան, որուն ձեռնարկած էի՝ դադարեցաւ:

Այժմ, որ առողջութիւնս վերագտնելու ընթացքին մէջ եմ, որպէս իղնի աւագ պարտականութիւնս պիտի շարունակեմ գայն Հոկտեմբերին Հայաստան երթալով ու այցելելով կարիքաւոր երաժիշտ-երաժիշտուհիներուն:

Այլեւս, սիրելի հայորդիներ, գաղտնի չէ թէ Հայաստանի բարգաւաճման հետ կեանքն առաւել եւս սղած է եւ ժողովուրդէն շօշափելի մասը դժուարութիւններով եւ գրկանմաններով կ'ապրի: Զիս մտահոգողը ու յուզողը օգնութեան կարօտ երաժիշտներն են, որոնք ապրուստ ապահովելու վիճակի մէջ չեն իրենց չափազանց յառաջացած տարիքին, ինչպէս 98 տարեկան Ա.Պ. սերունդներ դաստիարակած երաժշտագիտուհի կամ կրկին տարեց Շ.Ա.ը, որ հիւմադութեան պատճառաւ աչքին լոյսը գրեթէ ամբողջութեամբ կորսնցուցած է եւ ուրիշներ, որոնք ապրուստ ապահովելու այլընտրանք չունին եւ մատնուած են բշտառութեան:

Այսու, ջերմապէս կը խնդրեմ ձեզմէ որպէս ազգին կարեկցող հարազատ գաւակները օգնութեան ձեռք կարկառեմ մեր երաժշտական մշակույթը վառ պահած կարիքաւոր բոլորներուն ու եղբայրներուն:

Թէեւ նախկին գրութիւններով ըսած եմ, այսու եւս կը յիշեցնեմ, որ մտի անդորրութեան համար սոյն անձերուն, որ յանձնեմ ձեր օգնութեան գումարները, օրուան բուականով եւ իրենց ստորագրութիւններով շնորհակալագիրներ առնելով վերադարձիս կ'ուղարկեմ գանձման ձեռք:

Ձեր օգնութեան սրտարուխ նուէրները կրնաք դրկել հասցէիս որ է՝ Krikor Pidejian 72 Pilgrim Avenue Yonkers, N.Y. 10710

Tel. (914) 793-0913
Աստուած ձեր սրտի փափաքին համաձայն վարձատրել ձեզ եւ միշտ օգնական ըլլայ ձեզի:


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ


Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մտնուկներու Քայքայարարչի բաժնում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վնասի հետեւեանցով պատահած վնասուածքներու բուժում:
Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԸՆԿԵՐԱԿԻՑԻԴ ՅԵՏ ԻՆՉ ՏԵՍԱԿ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՋԱՏԱԳՈՎ ԵՍ

Ոչ ոք կրնայ գուշակել հանդիպման մը ապագան, մանաւանդ զգացական հարցերու վերաբերեալ: Սակայն կարգ մը յատկութիւններ կրնան կշիռքին նժարը յարաբերութեան մը կողմը թեքել, որ կրնայ մէկ օրէն աւելի չչարատեւել եւ կամ երկարատեւ դառնալ:

Ի՞նչ կ'ուզես կողակիցիդ հետ ունեցած յարաբերութենէն, ինչպէ՞ս կը փափաքիս որ ան վարուի հետդ, եւ քեզի համար ի՞նչ նշանակութիւն ունի միասին կեանքը... եւ ամուրիութեան լուծութիւնը: Պատրաստակամութիւն ունի՞ր մէկ գիշերուայ արկածախնդրութիւն ապրելու:

Գիտնալու համար, թէ ի՞նչ տեսակի կիներէն ես, պատասխանէ հետեւեալ հարցումներուն:

1) Կեանքիդ մէջ ունեցած ամէնէն երկար յարաբերութիւնը տեւած է.

Ա) Մի քանի օր:

Բ) Մի քանի ամիս:

Գ) Մի քանի տարի:

2) Ծնողքիդ միջեւ յարաբերութիւնը ինչպէ՞ս եղած է.

Ա) Բոլոր յարաբերութիւններուն նման ունէր իր ելեւէջները, բայց անոնք շարունակած են միասին մնալ:

Բ) Իրարու չէին հանդուրժեր եւ շատոնց բաժնուած են:

Գ) Իրար շատ հասկցող են եւ կը սիրեն գիրար:

3) Յարմար թուող անձի մը հետ հանդիպում մը ունիս.

Ա) Շուտով կը փորձես տիրապետել անոր, որովհետեւ նախապէս արդէն ծրագրած ես ամուսնութեան մասին:

Բ) Կը նախընտրես ուրիշին հետ ալ փորձառութիւն ունենալ, որովհետեւ դուն չես կրնար պատկերացնել, որ միայն իրեն կը պատկանիս:

Գ) Կը վախնաս որ սխալ ձեւով վարուիս կամ խօսք մը ըսես, որ ան փախի քեզմէ, հետեւաբար միշտ կը հակակշռես դուն քեզի:

Դ) Զիջերուդ հանդարտութիւնը կը պահես. ընդհանրապէս կեանքիդ մէջ պատահած հանդիպումներուն ընթացքին չես աճապարեր:

4) Ժամանակը կ'օգտագործես.

Ա) Ընդհանրապէս ծայր աստիճան:

Բ) Ոչ պէտք եղածին պէս:

Գ) Կը փորձես խաղ ընել ժամանակին հետ եւ շատ անգամներ կը յաջողիս:

5) Քեզի համար միացեալ գոյգ մը՝

Ա) Միաձուլում է:

Բ) Իւրաքանչիւրը կ'ապրի իր անձին համար:

Գ) Արկածախնդրութիւն է:

6) Զոյգի մը համար լուծութիւնը՝

Ա) Սարսափազդու է:

Բ) Ապահովութիւն է:

Գ) Անխուսափելի է:

7) Համացանցի վրայ կը խօսակցիս լաւ երիտասարդի մը հետ. յաջորդ քայլին անցնելու համար՝

Ա) Իրմէ կը խնդրես յաւելեալ նկարներ դրկել քեզի:

Բ) Կ'առաջարկես հեռաձայնով խօսակցիլ, որ կը տեւէ մօտ 2 ժամ:

Գ) Կը հրաւիրես միասին գալաթ մը սուրճ առնելու, սակայն այդ չի նշանակել, թէ իրեն բան մը կը խոստանաս:

8) Ամուրիութիւնը՝

Ա) Իր կշիռքը ունի քովդ:

Բ) Հանգրուան մըն է պարզապէս:

Գ) Քեզի համար չկայ անկէ աւելի նեղացուցիչ բան:

Նիշերու Ցուցատխտակը.

1 2 3 4 5 6 7 8

Ա 1 2 1 1 2 1 1 1

Բ 2 1 2 1 1 3 1 2

Գ 3 3 1 3 3 2 3 3

Դ 2

ԱՐԴԻԻՆՔՆԵՐ

- Եթէ հաւաքած ես 8էն 14ի միջեւ կէտեր, անկասկած կը ցանկաս մէկ գիշերէ աւելի տեւող յարաբերութիւն մը ունենալ: Սակայն գիտակցաբար կամ անգիտակցաբար, ամէն բան կ'ընես որպէսզի այդ չպատահի: Հոս երկու հակասութիւններ կան. բացարձակ անկախութիւնը եւ քեզ կապանքող զգացական կապուածութիւնը:

Քիչ մը կը տատամսիս, որովհետեւ իրականութեան մէջ չես գիտեր ինչ կ'ուզես եւ ինչի պէտք ունիս: Երբ առանձնութենէ նեղանաս ոեւէ մէկը կ'ընդունիս, իսկ եթէ այդ առանձնութիւնը հաճելի ըլլալ քեզի, կը համարես որ ոեւէ մէկուն պէտք չունիս: Այս մէկը հակասական հարց մըն է. կը ջատագովես անձի մը հետ գոյգ կազմելու կեանքը եւ միաժամանակ, կը վախնաս որ խեղդուած զգաս անոր հետ:

- Եթէ հաւաքած ես 15էն 21ի միջեւ կէտեր, որոշ չափով գիտես ուզածդ: Յարաբերութիւն մը կրնայ երկար տեւել, բայց որոշ ժամանակաշրջանի մը համար միայն: Ինքզինքիդ կը հարցնես հարցումներ, որոնց պատասխանները կը խորհէ իր թէ գիտէիր, ինչ որ կայունութիւնը կը խանգարէ: Յոյսդ չես կորսնցուցած իտէալ յարաբերութիւնը գտնելու: Լուծութիւնը քեզի ապահովութեան զգացում կու տայ, սակայն միաժամանակ քեզ ճնշում կը պատճառէ: Փափաք ունիս միանալու եւ միեւնոյն ատեն անկախ մնալու. եւ շատ անգամներ դժուար է այս երկու վիճակները միացնել: Փորձէ՛ հարցերուն աւելի հանդարտօրէն մօտենալ:

- Եթէ հաւաքած ես 22էն 28ի միջեւ կէտեր, շատ լաւ գիտես թէ ինչ կ'ուզես եւ աշխատած ես անոր տիրանալու: Գիտակցած ես, որ յարաբերութիւնը բախտի չի ձգուիր, այլ պէտք ունի ջանքի եւ գիշումներու, երկար ժամանակ գոյատեւելու համար: Դժուարութեանց դիմաց չես ընկրկիր:

ՔԱԶԱԼԵՐԻ ՏՂԱՄԱՐԴԸ ՈՐՊԵՍՁԻ ԱՐՏԱՅԱՅՏԷ ՔԵԶԻ ԶԱՆԴԵՊ ՈՒՆԵՑԱԾ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ընդհանրապէս տղամարդիկ այնպէս կը թուին, թէ կարծր են եւ բնաւ չեն հետաքրքրուած յարաբերութեան զգացական բաժինով, կամ նուազագոյնը, թէ հարց ունին իրենց զգացումները անկեղծօրէն եւ բացայայտօրէն արտայայտելու: Բոլոր տղամարդիկ ներքինով մանուկներ են եւ եթէ անոնք գտնեն կնկան կողմէ ներկայացուած յարմար քաջալերանքը, ապա պիտի բացուին եւ աւելի հանգիստ կերպով պիտի արտայայտուին իրենց զգացումներուն մասին:

Հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք կարգ մը խրատներ, որոնք կ'օգնեն քեզի՝ այս առաքելութիւնը իրագործելու:

*Նախաձեռնողը եղիր.- Ընդհանրապէս տղամարդը կը փորձէ հասկնալ կնոջմէ բխած որեւէ նշան, որպէսզի յարաբերութեան կանաչ լոյսը համարէ զայն, ինչպէս ժպիտը եւ իրմով հետաքրքրուածութիւնը, հետեւաբար, ան տեւաբար կը վարուի որսորդի տեսանկիւնէն, որ կը փորձէ որեւէ ձեւով մօտենալ նպատակին: Այս գործողութիւնը դիւրացնելու եւ ուղղակի արդիւնքի հասնելու համար, դո՛ւն կատարէ առաջին քայլը, այդպիսով շատ «դարձուածքներ» պիտի ինայես, որոնց ան պիտի դիմէ՝ ուշադրութիւնդ գրաւելու համար:

*Նկատի առ գովաբանական խօսքերը.- Գովաբանական անկեղծ խօսքերը գործածէ իր համակրանքը շահելու համար:

Օրինակի համար, գովէ իր վայելչակազմութիւնը կամ գա-

ղափարները: Հոս պէտք չունիս յարմար վայելեանը սպասելու, այլ ժամանակը յարմարած պահուն արտայայտէ այս խօսքերը:

*Կարծիքը խնդրէ՛.- Այս ձեւով ան պիտի զգայ, թէ իր կարծիքը կարեւոր է եւ պիտի հասկնայ, որ դուն իր տեսակէտը կը յարգես, ինչ որ իր ինքնավստահութիւնը պիտի ամրապնդէ:

Սակայն գլխաւոր նպատակը, որ այսպիսով կարելիութիւնը պիտի ունենաս գիտնալու իր մտածածը եւ մտքին մէջ գոյութիւն ունեցածը:

*Իր կատարելիքները մի յուշեր իրեն.- Իր նկատմամբ բոլոր ազնիւ վերաբերմունքը յօդս կը ցնդին եթէ ան պահ մը զգայ, թէ իրեն կը յուշես իր կատարելիքները: Հետեւաբար, միշտ յիշէ, թէ կրնաս իրմէ խնդրել քու փափաքածդ կատարել, բայց բնաւ մի ըսեր իրեն, թէ ինչպէ՞ս պիտի կատարէ այդ մէկը:

*Կեղծաւորութիւն մի՛ ըներ.- Կարգ մը տղամարդիկ յայտնաբերած են, թէ իրենց սիրած կնկան անկեղծօրէն վարուիլը (առանց ձեւառիկ շարժումներու եւ վարուելակերպերու) ամենէն կարեւոր կէտերէն է ամուսինները դէպի իրենց մղող, որովհետեւ այդ մէկը զօրաւոր ապացոյց է կին անհատին ինքնավստահութեան:

*Ժպտա՛.- Տղամարդոց ուշադրութիւնը գրաւող կարեւոր կէտերէն մէկն ալ ուրախ կիներն է, որ ունի գրաւիչ ժպիտ: Հետեւաբար, կը խրատենք կիներուն, որ աւելի ժպտան եւ փոխադարձ ժպիտ ստանան:

ՍՈՒՆ ԵՒ ՍԽՏՈՐԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

* ՍՈՒՆ

Սոսիսն մէջ ջուրը կը կազմէ 80-85%, կը պարունակէ ազօթային նիւթեր, բջջաթաղանթ, կենսասնիւթեր, եթերային իւղեր: Սոսի կը նպաստէ սեռային ցանկութիւններու ուժեղացման, կը կանխարգիլէ անօթներու խցանումը, կ'արագացնէ արեան շրջանառութիւնը:

Խորոված սոսիը օգտակար է հազի ժամանակ: Ճզմուած, հում սոսի կը նպաստէ մարմնի ցրտահարուած մասերու վերականգնման: Շատ օգտակար է սոսիը ուտել կիսաեփ, խորոված, կիսատապկուած վիճակով:

Ուտելու համար կ'օգտագործուի նաեւ կանաչ սոսի, որ ոչ միայն օգտակար է, այլ նաեւ խորթաբեր: Բուժական յատկութիւններով կարմիր սոսիը աւելի առաւելութիւններ ունի, քան ձերմակը:

* ՍԽՏՈՐԸ

Կը պարունակէ մինչեւ 55-60% ջուր, ածխաջրատներ՝ մինչեւ 30%, եթերաիւղեր, հարուստ է կենսասնիւթերով: Սխտորը իր բուժիչ յատկութիւնները կը պարտի ailline կոչուող ծծմբային նիւթին: Սխտորը կը նուազեցնէ իւղերու քանակը արեան մէջ, կը պակսեցնէ «վատ», իսկ կը բարձրացնէ «լաւ» քոլեսթրոլի քանակը, ունի ասֆիրինի նման ազդեցութիւն, կ'իջեցնէ ար-



եան մակարդելիութիւնը:

Ամէն օր՝ ճաշի ժամանակ, ուտել 2-3 պճեղ սխտոր, որ կը մաքրէ արեան անօթները, միզարտադրութիւնը, կը գրգռէ սեռային գեղձերու գործունէութիւնը, կը ցուցաբերէ հակաշաքարախտային գործունէութիւն, կը բարձրացնէ օրկանիզմի կայունութիւնը փոխանցիկ հիւանդութիւններու նկատմամբ, կ'արգիլէ քաղցկեղային բջիջներու աճը:

Սխտորի չարաշահումը բացասական ազդեցութիւն ունի երիկամունքի հիւանդութիւններու ժամանակ: Երեկոյեան կէս կամ մէկ պճեղ սխտոր ծամելը ամբողջ կեանքի տեւողութեան կ'ապահովէ ակռաներու ձերմկութիւն: Սխտորի տհաճ հոտէն ձերմազատուելու համար կարելի է ինձոր ուտել, ազատքեղի արմատ ծամել կամ բերանը ողողել կիտրոնի հիւթով:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել «Կայծ» Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

ԺՈՂՈՎ ԼԵՌԱՆ ՎՐԱՅ

Շարունակուած էջ 13-էն

ինչի մասին է նա խօսելու, միթէ՞ ինչ գաղտնի բան կայ, որ սար է բերել մեզ ասելու, այսպիսի մտածումներ, բայց որեւէ ակնարկ կամ խօսք չեղաւ անհնազանդութեան: Նրանք անխօս կեցուածքով իրենց լողութիւնն էին ցոյց տալիս իրենց սիրելի ղեկավար ընկերոջը: Նրանք նոյն ոգեւորութեամբ սկսեցին լուռ քայլել մինչեւ նախաճաշի հրաման տրուի:

Արդէն իսկ բարեբեր արեւի ոսկեհոտը շողերը արեւելքից դէպի երկնքի կամարն էին փոռել, սակայն հրեղէն գունդը լուսաբեր դեռ մնում էր բարձրաբերձ Դամաւանդի կատարի ետեւը:

Հէ՛շ, ինչ գեղեցիկ է վաղնջական առաւօտուն բարձրունքից տեսնել հրաշափառ ծագումը արեգակի, նոյնքան առ երեւոյթ գմայլելի տեսարան մայրամուտը արեգակի, ծագումը աւելի գեղեցիկ է քան մայրամուտը, քանի որ առաւօտեան նուրբ ոսկեգոյնով է ողողում երկինքն ու ողջ կիսագոտին, իսկ մայրամուտի հորիզոնը կրակոտ կարմիրով է ներկում եւ աստիճանաբար հեռանում է մեզանից իր տեղը գիջելով մութին:

Լեռնագնացների քայլերը հնչում էին ներդաշնակ, ինչպէս՝ ձգտումներով, նոյնպէս՝ սրտի բաբարձրմով, գաւազանների զարկերով համահունչ: Նրանք հեռուից դիտողի աչքին ճգնաւորի էին նմանում, որ ուղղուած են խորախորհուրդ նպատակի:

Նրանք քայլում էին առոյգ ու աշխոյժ լեռնային նեղ կածաններից անցնելով ապառաժներ ու ժայռեր կոխկռտելով:

Արդէն իսկ արեւն իր ամբողջ էութեամբ դուրս էր ցցել իր հրեղէն գլուխը եւ յամբօրէն առաջանում էր, սակայն ամպակոյտերը մերթ ընդ մերթ արգելք էին լինում արեւի ամբողջական գնդի երեւոյուն, նա ամպածուէնների արանքից ծիկրակին էր տալիս եւ ցոյց տալիս իր հրաշապատում սկաւառակը:

Արեւը բարիք է, արեւը կենսատու է, արեւը բնութեան հրաշագործ էակն է:

Յանկարծ լսուեց Անդրանիկի ձայնը ուղղուած տղաներին:

-Ախպրտի՛ք ջան, Արսէ՛ն, Հա՛յկ, Արամայի՛ս եւ Արմէ՛ն, յարմար էք տեսնո՞ւմ՝ այս քարաժայռի ներքեւում հեռու քամիներից նախաճաշե՞ք:

Տղաների շարժումներից երեւաց, որ թէ՛ յոգնել են եւ թէ՛ քաղցածացել:

-Այո՛, լաւ յարմար տեղ է:

Համաձայնութիւն յայտնեցին տղաները, ապահով տեղ եւ դիտարան, որտեղից լաւապէս տեսնուում է Թեհրան քաղաքը իր համապատկերով, ուր 3.5-4 միլիոն բնակչութիւն է ապրում առօրեայ կեանքի մտահոգութիւններով, ձգտումներով եւ ոգորումներով, արեւելեան Աստուածավախ ժողովուրդ՝ հիւրասէր եւ բարեխիղճ հոգեբանութեամբ:

Հարթ քարէ կտորներից պատրաստուած է սփռոց, որի վրայ դրուած է նախաճաշը՝ եփած հաւկիթներ, պանիր, լաւաշ կաց եւ տաք թէյ: Տղաները բոլոր կազմած, քարերի վրայ նստած վայելում են բոլորի կողմից պատրաստուած նախաճաշը, ի՞նչ հաճոյքով, ի՞նչ ախորժակով, այդ էլ Ալբորգեան լեռնաշղթայի մէկ հատուածի վրայ,

արեգակի ոսկեծոյլ շողերի տակ, շուրջբոլորը ժայռեր ու ապարներ, ցանցառ բուսականութիւն, լեռնային կակաչներ իրենց ձիգ ցողուններով:

Լի առնականութեամբ հինգ երիտասարդներ, գիւղական արդար կեանքում ծնուած ու մեծացած, մէկ-մէկ նմանում էին մեր այն Ջան Ֆեղայիներին, որոնք լեռներից ապաստանած կոխ էին մղում թուրք կեղեքիչների դէմ, նրանք ազգասիրութեան վառ օրինակներ էին, իրենց անձը վտանգելով ի պաշտպանութիւն հարստահարող եւ տառապող հայ գիւղացուն:

Վէրքերով լի ջան ֆետայ եմ թափառական տուն չունիմ.

Եարիս տեղակ գէնք եմ գրկել Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

-Ախպրտի՛ք ջան, ժամն է եկել, մէկգմէկու խելքին դիմելով մեր ներկայ հայ կեանքի կարեւոր իրադարձութեան մասին խօսենք, առաջարկներ տանք, մտքեր փոխանակենք եւ որոշումներ անենք: Այսօրւայ խօսակցութեան եւ ժողովի համար լեռն եմ ընտրել այն նպատակով, որ այս լե՛ռը մեր հետագայ կեանքի խորհրդանիշը պիտի դառնայ, լեռան նման հաստատուն ու ամրակոռ մնանք՝ հայրենիքի, հաւատքի եւ գաղափարի նկատմամբ:

Անդրանիկն իր հայեացքը մէկ-մէկ տղաների դէմքերին յառելով խօսում էր լուրջ եւ կենտրոնացած իր ասելիքի վրայ, նա լեռը իրենց ապագայ գործունէութեան որպէս օրինակ ակնարկեց: Ճիշտ է, որ լեռը քարեղէն գանգուած է, սակայն նա կամքի եւ հաւատքի անդրաբնութիւն է խորհրդանշում:

Ճգնաւորները իրենց ժուժկալ կեանքով մեկուսանում էին լեռնեւրում, իրենց մարմինը չարչարանքի էին ենթարկում, որպէսզի ինքնամաքման եւ հոգու բիւրեղացման ճամբով արժանի դառնան Աստու բարեգութ տնօրէնութեան՝ դրախտային կեանքին:

-Սիրելի՛ ընկերներ, մենք էստեղ հաւաքուածներս գիւղում ծնուած, քիչ թէ շատ ուսում առած եւ քաղաք տեղափոխուած երիտասարդներ ենք, մենք ժառանգորդն ենք Շահաբասեան բռնազաղթի սերունդների, 1603-7 թուերին Շահաբասը մեզ մեր հայրենիքից կտրեց, ինչ աղէտներ եւ չարիքներ էր, որ չհասցրեց մեր ժողովրդին, այդ մասին Առաքել Դաւրիթեցին գրի է առել մանրամասն, մեզ գերի բերեց այս երկիրը, որ ձուլի, ինչ տաժանակիր նեղութեանց ենթարկուեցինք վասն կրօնի եւ ազգութեան, սակայն յարգանք մեր պապերին, ոչ թէ նրանք չձուլուեցին, այլ ինչ նախնախնդրութեամբ պահեցին իրենց հայրութիւնը եւ հայրենիքի նկատմամբ իրենց սէրն ու կարօտը: Մեր պապերի այս երկիրը բերուած օրից մինչեւ մեր ժամանակները հայրենիքի կարօտով ենք ապրել եւ յոյսով սպասել, որ օրից մի օր հայրենիքը պետութիւն ունենայ եւ կարող լինի մեզ վերադարձնել, մեզ տէրութիւն անել: Ինչպէս տեսնում էք՝ հայրենիք ունենք, քիչ թէ շատ սկսուել է դարձեալ ներգաղթը, Խորհրդային միութեան ընտանիքում գտնուող Հայաստանի պետութեան թոյլատրուել է իր Սփիւռքահայ հայրենակիցներին ըստ ցանկութեան դիմում ներկայացնել հայրենադարձելու համար, հստեղ եւ խօսքը տալիս եմ ձեզ, ամէն մէկը ինչ մտածումներ որ

ունէք էս ուղղութեամբ ասէք: Առաջին խօսք առնողը Արմէնն էր.

-Կասկած չկայ, որ մենք բոլորս սիրում ենք մեր հայրենիքը, հայրութիւնը եւ ազգութիւնը, դրա համար հազար ու մի տեսակ նեղութիւններով մեր պապերը ինչ կարօտով ու երկիւղածութեամբ հայրենիքի սէրը եւ իրենց հաւատը պահել եւ կտակել են մեզ, ապրել են այն յոյսով որ մի օր վերադառնան երկիր, հիմա հերթը մեզ է հասել, որ այդ կտակը իրականացնենք, մեր գլխի ու բազուկի ուժը ծառայեցնենք նրա վերածննդեան կառուցման:

Արմէնն իր խօսքը կապեց կարծ ու կտրուկ, նա իր ընկերների մէջ ճանաչուած էր որպէս հայրենասէր եւ պատրաստ էր ամէն ինչով ծառայել իր ժողովրդին:

Նրան յաջորդեց Արսէնը.

-Մենք միայն մեզ համար պէտք է մտածենք, հակառակ չեմ, որ մենք եւս պէտք է հայրենիք վերադառնանք, նկատելով որ հայրենիքից դուրս օտար տեղերում ապագայ չկայ, ապահովութիւն չկայ: Ընդհարումներ ու կռիւներ շարունակ լինում են աշխարհի տարբեր կողմերում, եւ ուր հայ չկա՞ց, այսպիսով մեր հայերն էլ որպէս քաղաքացիներ մասնակցում են կռիւներին, գոհեր են տալիս, գաղթում են մի այլ երկիր իբր թէ ապահովութիւն գտնելու համար, սուժում են՝ իրենց վաստակած ինչքը աժան ձեռքից տալով: Աւելի լաւ է գնալ երկիր, այսպիսով միտքը հանգիստ է, քո հողի վրայ ես ամուր ու հաստատուն եւ ոչ մի ուժ չի կարող քեզ հայրենիքից հեռացնել, քո վաստակն էլ մնում է քո հողի վրայ փոխանցուելով քո ժառանգներին: Թող հստեղ լինեմ հայրենի բանաստեղծի քառեակը՝ Սերմերդ յանձնիր հողին, Մատներդ երբեք չզողան, Հարազատ հողն է քո ուղին, Ջի՛ դաւի հողը Նայիրեան:

-Մենք բոլորս այս կարեւոր ժամանակահատուածում անելիքներ ունենք, նպատակ կազմակերպչական աշխատանքներ տանելն է: Մտնենք ժողովրդի մէջ, նրանց քարոզենք, նրանց քաջալերենք եւ օգտակար լինենք: Արսէնն իր մտքերը յայտնեց լուրջ եւ մտածուած:

Հայկը սկսեց ասելիքը.

-Այո՛, ընկերներ՛, ժողովրդին պէտք է համոզել, որ հայրենիքը ամենաապահով տեղն է, ուր մարդ հայ կը մնայ եւ հայ կը թաղուի, ապագայի ապահովութիւն, մտքի հանգստութիւն եւ հոգու խաղաղութիւն կ'ունենայ: Ինչպէս խօսուում է ներկայիս հայրենի ղեկավարութիւնը իւրաքանչիւր ընտանիքի ապահովում է գործով, բնակարանով եւ երեխաների համար դպրոցով, ժողովուրդն էլ դա է ուզում: Ասում են Հայաստանը ազատ չէ, Հայաստանին ռուսներն են իշխում, Հայաստանում բռնատիրութիւն է, ոչ կրօն են ճանաչում եւ ոչ ազգութիւն, իրենց կարծիքով ենթադրենք, որ այդպէս է, արդեօք հայրենիքից պէտք է հրաժարուե՞լ, իշխանութիւնները յաւերժական չեն, գալիս ու գնում են, ժողո-

վուրդն ու հայրենիքն են յաւերժական: Հայրենիքից դուրս հայրենիքին վատաբանելը ճիշտ չէ, ներկայումս այսպիսի հարցեր բարձրացնելու ժամանակը չէ: Այսպիսի խօսքեր տարածողները ուզում են ժողովրդի մէջ հակակրանք առաջացնել եւ վատատես դարձնել հայրենիքի նկատմամբ, թշնամին չի ուզում հայրութիւնը քաշուի Հայաստան, բնակչութիւնը շատանայ: Այս ներգաղթներով աշխարհի ամբողջ հայրութիւնը չէ որ կը հայրենադարձեն, ուստի սփիւռքահայի մօտ միշտ հայրենիքի գաղափարը պէտք է սրբութեան բարձրութեան վրայ պահել, որպէս ազգապահպանման եւ հայապահպանման ամենակարեւոր յենարանն ու կռուանը:

Այնուհետեւ հերթը հասաւ Արամայիսին.

-Մենք բոլորս գիտենք Հայաստանը անկախ պետութիւն չէ եւ գտնուում է սովետական ընտանիքի շարքում որպէս Մոսկուային ենթակայ ռեսպուբլիկա, հիմա ասենք անուանական եւ ոչ թէ պաշտօնական, սակայն այդ մեր երկիրն է եւ այնտեղ ապրում են հայեր իրենց պետական դրուածքով: Հայկական կեանքն է եւ ունի այնտեղ իր տնտեսութեամբ, հասարակական կեանքով, համալսարաններով եւ կրթական համակարգով: Մեր մշակուածն է պահպանուած, գիր ու գրակաւութիւնն է զարգանում՝ իր ակադեմիայով, պատմաբաններով, գրողներով, բանաստեղծներով, մշակուած գործիչներով եւ հազար ու մի տեսակ կազմակերպութիւններով: Իւրաքանչիւր հայի հպարտանքի արժանի Մեսրոպ Մաշտոցի անուամբ Մատենադարանն ունենք, ուր աշխարհի չորս ծագերից այնտեղ են հաւաքուած մեր ձեռագիր թանկարժէք մատենաները եւ այնտեղ են աշխատում տասնեակ գիտաշխատողներ: Ս. էջմիածինը՝ մեր հաւատքի կենրոնը, որին է ուղղուած իւրաքանչիւր հայի հայեացքը եւ նրանով է տոգորուում սիրտն ու հոգին, պահպանուած եւ պաշտպանուած է ամենին սիրելի վագգէն Ամենայն Հայոց կաթողիկոսի հովապետութեամբ: Հայաստանը լաւ թէ վատ մեր երկիրն է, ոչ ոք իր լաւը չի տայ մեզ, խաչը ինքը՝ տէրն է գորացնում, մենք ենք որ պէտք է նուիրուածութեամբ պաշտպան կանգնենք եւ զարգացնենք մեր երկիրը, ով է տեսել ապագան, տեսար մէկ օր մենք էլ անկախացանք, ոչ մի տան ճրագ ընդմիջտ հանգչած չի մնայ:

Արամայիսն իր խօսքն աւարտեց ասելով.

-Հայրենասիրութիւնը լոկ խօսք չպիտի լինի, այլ՝ սէր, կոչում եւ ձգտում, ինչպէս արուեստի, գիտութեան պարագային եւ հոգեւորական սքեմը ընդունողի համար: Հայրենասիրութիւնը անձնանուիրութեան սիրոյ նշան է, աշխատանք է պահանջում, քարը քարի վրայ դնել է սիրում, պայքարել ու մաքառել է պահանջում ժողովրդի բարօր կեանքի համար, ճառերով ու խօսքերով հայրենիք չի կռուցուի:

(Շարունակելի)

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 Masis2@earthlink.net

ԻՏԱԼԻՈՅ ԴԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Շարունակուած էջ 8-էն

ձաւոր Արեւելքի եւ մանաւանդ եւրոպական երկիրներու ճարտարապետական աւընչութիւններու ուսումնասիրութիւնը: Միշտ նկատի պէտք է ունենալ, որ Հայ-Իտալական Աւընչութիւններ հասկացողութիւնը կ'ընդգրկէ միջերկրական շրջանի ամբողջ տարածքը եւ համաձայն ֆրանսացի արուեստաբան Անտրէ Կրապարի, «Հայաստան ստեղծած է իրապէս ազգային առաջին քրիստոնէական ճարտարապետութիւնը եւ այս իմաստով կանխած է եւրոպայի Միջին Դարու ճարտարապետական դպրոցները» (տե՛ս Հայկական ճարտարապետութեան Յուշարձաններ, հրտկ. Համագրային Պէշրութ, 1972, էջ 9):

Փորձեր կատարուած են եւ մինչեւ այսօր կը շարունակուին Հայկական ճարտարապետութիւնը հեռացնել իր «Հայկական» արմատներէն, վերագրել «բիւզանդական արուեստ»ին, խեղաթիւրելով կամ տուրք տալով թիւր կարծիքներու եւ կամ մինչեւ իսկ սեփանակացնել:

Հայ-Իտալական ճարտարապետական աւընչութիւններու մասին անդրադարձած են հին ու նոր հեղինակներ, հայ եւ օտար: Սակայն, հիմնական խնդիրները լիարժէք կերպով ցարդ ենթարկուած չեն ուսումնասիրութեան: Այս տեսակէտով, Ազգեհիւրլեանի գիտական ուսումնասիրութիւնը այս բացը գիտականօրէն կը լեցնէ: Դժբախտաբար, Հայ-Իտալական ճարտարապետական աւընչութիւններ հասկացողութեան մէջ տեղ գրաւած է «Բիւզանդական արուեստ» եւ «Բիւզանդական աւընչութիւններ» տեսակէտերը, իբր Իտալիոյ պատմական զարգացման շղթայի կարեւորագոյն օղակներէն մէկը: Այս ալ, համաձայն Հեղինակին, յաղթահարելի եւ գերազանցելի խոչընդոտ մըն է, որու մասին Հեղինակը բացայայտօրէն կը հաստատէ թէ «Բիւզանդական արուեստ» գոյութիւն չէ ունեցած: Այդ մէկը Բիւզանդական կայսրութեան մէջ գտնուող ժողովուրդներու՝ Յոյներու, Կապադովկիացիներու, Հայերու եւ Ասորիներու դարերով ստեղծած արուեստի ու ճարտարապետութեան համադրումէն յառաջացած արուեստն է, որ եւրոպացիներու կողմէ ժԹ. դարուն յայտնաբերուելով՝ անուանեցին պատմութեան բեմէն հեռացած Բիւզանդիոնի պետութեան անունով, քանի որ անոնք տակաւին ծանօթացած չէին բնիկ ժողովուրդներու պատմութեան եւ անոնց մշակոյթին:

Հեղինակի ուսումնասիրութեան ծիրէն ներս, հիմք ծառայած են Հայ գաղթականութեան յառաջացման եւ գաղթական կեդրոններու մէջ կառուցուած Հայ եկեղեցական կառուցները, ինչպէս նաեւ Պաւլոսիկեան եւ Թոնդրակեան աքսորեալներու տեղաշարժը, որոնք «Ցնցելով Արեւելքը՝ լուսաւորեցին Արեւմուտքը»: Հեղինակը այս մերձեցումով կը քննարկէ Հայ Գաղթավայրերու «Հայկական ճարտարապետութիւն»ը, գաղթավայրերու մէջ իրականացուած եւ ազդեցութիւններու ամբողջ իրադրութիւնը, որոնք մինչեւ այսօր համակողմանի մակարդակով չեն ուսումնասիրուած: Այս իմաստով, Հեղինակին հետազօտութիւնը գիտական իմաստով շատ կարեւոր նուաճում մը կը համարուի: Մասնագէտ Ազգեհիւրլե-

անի ուսումնասիրութեամբ, վատահար ասկէ ետք պիտի ճշտուին Հայկ. ճարտարապետութեան աստիճանը, զարգացման փուլերը, մակարդակը, տարածումի ուղղութիւնները եւ ամէնէն կարեւորը՝ ոճական զարգացումի ամբողջ ընթացքը, ինչպէս նաեւ ներկայութիւնը, ներգործութիւնը եւ նպաստը տարբեր երկիրներու եկեղեցական ճարտարապետութեան վրայ: Այս ուսումնասիրութեան արդիւնքները, Հայ-Իտալական ճարտարապետական աւընչութիւններուն վերաբերող փաստերն ու տուեալները ասկէ ետք հիմք պէտք է ծառայեն վերանայելու եւ հիմնաւորելու Հայ ճարտարապետութեան զարգացման վերաբերող տեսակէտերը, կարծիքները, ինչպէս նաեւ Հայ ճարտարապետական գիտութեան տեսական եւ փաստագրական նկարագիրը:

Մասնագէտ Հեղինակը, ա՛յլ մասնագէտներու կողքին, Հայկական ճարտարապետական զարգացումի ճամբուն վրայ գրեթէ ամբողջ Իտալիոյ եւ եւրոպայի մէջ կը տեսնէ յատկազօծային, յօրինուածային, շինարարական արուեստի եւ առանձին տարրերու կառուցողական ազդեցութիւնները եւ համակողմանիօրէն կը ներկայացնէ գիտական աշխարհին: Համեմատելով Հայ Գաղթականներու շարժումները, տեղափոխումները, անոնց եւրոպա թափանցումին, ոճերու սկզբնաւորումին ու զարգացման ընթացքը, Հեղինակը բացայայտած է, թէ ճիշտ այդ ժամանակաշրջաններուն է որ երեւան եկած են Հայ ճարտարապետութեան ազդեցութիւններու բացայայտ ներկայութիւնը: Հարկ է անդրադարձնել, որ ժԱ. եւ ժԳ. դարերու միջեւ, թէ՛ Իտալիոյ եւ թէ՛ եւրոպայի միւս երկիրներուն մէջ՝ կը տիրապետեն ճարտարապետական արուեստի եր-

կու մեծ հոսանքներ. անոնք ծանօթ են Ռոմանական Ոճ եւ Գոթական Ոճ անուանումներով: Ռոմանականը կը ծաղկի ժԱ. դարուն եւ ժԲ. դարու երկրորդ կէսին, իսկ Գոթականը կը սկսի ժԲ. դարու երկրորդ կէսին, իր լաւագոյն նմոշները տալով ժԳ. դարու ընթացքին:

Վ. Ազգեհիւրլեանի այս պատմական իրականութեան գիտական փաստագրումը ո՛չ միայն արդիական է, այլ նաեւ նշանակալից եւ շատ կարեւոր Հայկական ճարտարապետութիւնը միջազգային մակարդակի վրայ արժեւորելու տեսակէտէն: Հեղինակին կողմէ կատարուած ուսումնասիրութիւնը իսկապէս բովանդակալից է եւ արժանի բացառիկ գնահատանքի: Հեղինակին այս ուսումնասիրութիւնը ունի գիտական ու մասնագիտական լուրջ մակարդակ, արդիականութիւն եւ Հայ ճարտարապետութեան պատմութեան վերաբերող միջազգային արժէք:

Գրաւուած Թուական

Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 22, 2013

Armenian Independence Day Festival

SUNDAY SEPTEMBER 22, 2013

Sunday	Monday	Tuesday	Wednesday	Thursday	Friday	Saturday
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22 ★	23	24	25	26	27	28
29	30					

To reserve your booth please call Nor Serount Cultural Association

Չեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938